

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ ԳԱԻԱՌ

Կ Ա Մ

Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք

Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ

ՆԵԽԵՊԵՏՄԵԿԵՆ ՅԲՋԵՆ ¹⁾

1906 թուի կատարած պեղումներս. ²⁾

Այս տարի ամառը, դժբաղդաբար, բաւական ուշ յաջողուեց ինձ վերսկսել իմ սովորական ճանապարհորդութիւնները հնագիտական և աղգազրական նպատակով: Արդէն յուլիսի 1-ն էր, երբ ես Նոր-Բայազէտ հասայ, մնում էր մի երկու շաբաթ՝ որ գիւղացիներն սկսէին հունձը, երբ շատ դժուար է մշակներ գտնել, մանաւանդ այնպիսի տեղերում, ուր համայնքը միահամուռ ուժերով հնձում է եղեգնի շամբերը և ապա բաժանում իւր անդամներին մէջ: Այսպէս է և՛ Զաղալու գիւղը, որտեղ այդ միևնոյն պատճառով ես չկարողացայ պեղումներ կատարել անցեալ տարի: Այս պատճառով և՛ ես անմիջապէս ուղևորուեցայ այդ գիւղը, ուր մընայով երկու ամբողջ շաբաթ՝ կատարեցի հետեւեալ պեղումները:

Զաղալուն տեղաւորուած է Սեանայ լճի հարաւ-արևելեան անկիւնում, լճի անմիջապէս ափին, քաղաքից 76 կիլոմետր հեռու: Սա իւր այժմեան անունը ստացել է այն շրջաններից, քարայրներից, որ գտնւում են թէ լճի ափին բարձրացող ժայռերի և՛ թէ փոքր ինչ բարձր՝ հարթ տարածութեան վրայ: Այստեղ է գտնւում մի սեպածե արձանագրութիւն, որի իմաստն այն է, թէ

¹⁾ Տես Աղգազրական Հանդէս գ. XIV:

²⁾ Այս տարուայ պեղումները կատարել եմ Մոսկուայի Կայսերական Հնագիտական ընկերութեան յանձնարարութեամբ և գտնուած իրերը ցուցադրուած են Կովկասեան թանգարանի նոյն հնագիտական ընկերութեան Կովկասեան ճիւղի բաժնում:

Սարգսուրի, Արգիշտի որդին, խալախացուց հզօր արքայից արքան, որ բնակւում էր Տուշպա քաղաքում, նուաճել է Արքուքինի երկիրը, ¹⁾ և բաժանել է նրան Ուրտահինի երկրից: ²⁾

Ձաղալուում կան բազմաթիւ դամբաններ, որոնցից ամենից նշանաւորները գտնւում են լճի արևելեան ափին, (հարթ, գեղեցիկ տարածութեան վրայ, ուր կայ նաև մի հինաւուրց աղբիւր, որ յայտնի է, թէ երբ է բերուած, նրա խողովակներից մինին մենք հանգիպեցանք բաւական հեռուն՝ պեղում կատարելիս: Թէ գիւղում և թէ շրջականերում աղբիւրներ բոլորովին չկան:

Բացի այս ու այն կողմ ցրուած դամբաններից, գիւղից 3 կիլոմետր հեռու արևելեան ափին շարուած են երեք շարք դամբաններ, ձգուելով հիւսիսից հարաւ, միմեանցից 3—10 մետր հեռու: Առաջին շարքը լճից հազիւ 100 մետր հեռու լինի, լճի մակերեսից 1—2 մետր բարձր, միայն այս տեղը ճանճային է: Երկրորդ շարքը, որ համեմատաբար փոքր ինչ աւելի բարձր դիրքի վրայ է, առաջնից 50 մետր հեռու է, իսկ երրորդը՝ երկրորդից հազիւ 30 մետր հեռու: Իւրաքանչիւր շարքում 30—40 դամբաններ կան:

Երկրորդ շարքի հիւսիսային կողմում բարձրանում է մի շատ մեծ դամբան, որի նմանը կայ նաև սրանից մօտ 5 կիլոմետր հեռու՝ հիւսիս-արևելք՝ Գիլլի հարթութեան վրայ, որից ոչ այնքան հեռու նկատելի է մի լակիւտրի հետք.— Գիլլի գետակը Սևանայ լիճը թափուելու տեղից փոքր ինչ հեռու, լճի մէջ, նրա մակերևոյթից մօտ մի մետր ցածր ցցուած են չորս գերաններ միմեանց հանդէպ:

Փորձի համար ես առաջին օրը պեղել տուի իւրօքանչիւր շարքից մի դամբան: Երեք շարքի դամբաններն էլ միմեանց նման էին, սալաքարերը վերցնելուց յետոյ բացւում էին գերեզմանը, չորս կողմից անտաշ քարով պատ քաշած, և 1—2 մետր խորութեամբ դատարկ, պատերի քարերը ծխից սևացած էին. ^{1/2}—1 մետրահաս փորելուց յետոյ բացւում էր այրուած կմախքը՝ մօտը բրոնզէ իրեր և կաւէ ամաններ: Թողնելով երկրորդ և երրորդ շարքի դամբանները նկարագրել իրենց հերթում, ես կամենում եմ այստեղ յառաջ բերել առաջին շարքի դամբանի նկարագրութիւնը, որովհետեւ դրա պատճառով ես հրաժարուեցայ այդ շարքի միւս դամբանները պեղելու մտադրութիւնից:

¹⁾ Սևանայ լճի այս հարաւային ափերը.

²⁾ Հաւանականօրէն Երևանից դէպի արևելք գտնուող լեռնային կողմերը, ըստ Նիկոլսկու:

Ա. դամբան. Սա շրջանաձև էր, շուրջնակի պատած մեծ-մեծ քարերով. տրամագիծը վեց մետր էր, բարձրութիւնը 1 մետր: Փորելով մի մետրաչափ՝ պատահեցանք երեք սալաքարի, որոնք վերցնելուց յետոյ բացուեց գերեզմանը՝ որ ուղղուած էր արեւելքից արեւմուտք, քառանկիւնի էր, անտաշ քարերով պատ քաշած, 2,30 մետր երկարութեան, 1,50 մետր լայնութեան և 2 մետր խորութեան: Գերեզմանը դատարկ էր և մի մետրից աւելի ջրով լցուած, պատերն էլ ձխից սևացած: Կէս մետրաչափից աւելի փորելուց յետոյ գտանք մի այրուած ազդոսկր. սակայն ջրի խորութիւնը և սաստիկ սառնութիւնը թոյլ չտուեց մեր մշակ-ներին շարունակելու պեղումը: Ենթադրելով, որ նոյն շարքի ընդերս դամբանները լցուած կլինեն ջրով, քանի որ շուրջը ճահճային է, ևս հրաժարուեցայ այս շարքի դամբանները պեղելու մըտքից և քաջալիրուելով այն հանգամանքից, որ միւս երկու շարքի տեղը չոր է, համեմատաբար աւելի բարձր դիրք ունի և բաց արած դամբանների մէջ ջուր չկար, հետեւել օրն իսկ վարձեցի վաթսու՛ն մշակ, որոնցից 20-ին յանձնեցի պեղել մեծ դամբանը՝ իսկ մնացածին չորս չորս կամ երկ-երկու յանձնարարեցի բաց անել միւս փոքր դամբանները:

Ապա մշակների վրայ հսկելու հոգսը յանձնարելով ինձ ուղեկցող տեղական քահանային և իմ պահնորդին, անցեալ տարի իմ ցուցումներով ինձ հետ 2 ամիս շարունակ աշխատող Գէորգ մշակի հետ սկսեցի հետազօտել բացուած դամբանները և միտումի նկարագրել, խստիւ արգելելով մշակներին, որ տապանաքարերը վերցնելուց յետոյ չհամարձակուեն այլ ևս պեղել:

Այժմ անցնենք դամբանների նկարագրութեան:

Իմ պեղած դամբանների առաջին խումբը կազմում է այսօտեղի դամբանների երկրորդ շարքը, և թուով 16 հատ է:

Առաջին խմբի առաջին դամբանը 11 ¹/₂ մետր տրամագիծ ունի, շուրջնակի մեծ-մեծ քարերով պատած: Գետնի մակերևոյթից 2 մետր բարձր է, զագաթը հարթ. երկրորդ շրջանակ չի նկատուում: Մի մետրաչափ փորելուց յետոյ բացուեց 3 սալաքար, նրանցից երկուսը 70-ական սանտիմետր, իսկ մինը մէկ ու կէս մետր լայնութիւն ունէր: Երկուսն էլ 1,80 մետր երկարութիւն ունէին: Մյուսը վերցնելուց յետոյ բացուեց գերեզմանը, որ ուղղուած էր արեւելքից արեւմուտք, չորս անկիւնանի էր, անտաշ քարով պատած: Դատարկ էր, միայն արեւելեան կողմից աւագը հոսել էր և մի մասը լցրել: Երկարութիւնը էր 2,50 մետր, լայնութիւնը 1,50 մետր և խորութիւնը 1,60 մետր: Պատերը սևացած էին, դետինը պատած էր ճշ սևացած հողով: Մօտ մի մետ-

բաշափ պեղելուց յետոյ գերեզմանի արևմտեան մասում բացուեց մի երկարագլուխ կմախք, աջ կողքի վրայ, հիւսիսից հարաւ պառկած, և ոտները կուճ բերած: Կմախքը այրուած էր, բայց ոչ լիովին, այնպէս որ ոսկորները կիսայրուած ու սևացած մնում էին: Սրա գտնականից գտնուեց մի բրոնզէ դաշոյն, կողքին մի պառկած պուլիկ, փոքր ինչ հեռու մի ֆիբուլ, և մի մատանի, ոտների մօտ 12 հատ բրոնզէ նետ: Արևելեան պատի միջից էլ դուրս եկաւ 2 բրոնզէ մատանի և մի կոտրուած դաշոյն, նոյնպէս բրոնզից:

Երկրորդ դամբանը 17,50 մետր տրամագիծ ունէր, շուրջանակի պատած մեծ մեծ քարերով, գետնի մակերևոյթից 5 մետր բարձրութեան, գազաթը հարթ: Մօտ 5 մետր փորելուց յետոյ բացուեց երեք անագին սալ քարեր, մինը 2 մետր, մինը 1½ և երրորդը մի մետր լայնութեան, բոլորն էլ 2,50 մետր երկարութեան: Սրանց տակ բացուած էր գերեզմանը, արևելքից արևմուտք ուղղուած, հետևապէս և ծածկի սալ քարերը ձգուած էին հիւսիսից հարաւ: Գերեզմանի երկարութիւնն էր 4,50 մետր, լայնութիւնը 2,10 մետր. 2,15 մետր խորութեամբ բոլորովին դատարկ էր, չորս կողմը մեծ անտաշ քարերով պատեր էին քաշուած, որոնք ծխից սևացած էին: Մօտ 1½ մետր պեղելուց յետոյ շուրջ դուրս եկաւ, շարունակեցինք պեղումը հետեեալ օրերը, խորացրինք մի մետրից աւելի, սակայն ոչինչ չգտանք: Հարկաւոր էր աւելի խորացնել, սակայն շուրջ թոյլ չէր տալիս:

Երրորդ դամբանի տրամագիծն էր 10½ մետր, նոյնպէս շուրջանակի պատած մեծ մեծ քարերով. բարձրութիւնը գետնի մակերևոյթից 1½ մետր: Այսչափ փորելուց յետ բացուեցան 3 սալ քարեր, որոնց տակ ձգուած էր գերեզմանը 3,10 մետր երկարութեամբ, 1,30 մետր լայնութեամբ՝ արևելքից արևմուտք ուղղուած և ամբողջովին աւազով լցուած: 1,80 մետր խորութեան պեղելուց յետ արևմտեան կողմում բացուեց մի երկարագլուխ այրուած կմախք, հիւսիսից հարաւ ուղղուած, որը սաստիկ այրուած լինելու պատճառով չկարողացայ սեռը որոշել: Սրա մօտից դուրս եկան 2 բրոնզէ ապարանջան. հարաւային կողմում կար գառան կմախք, որի կիսայրուած կմախքը վերցրի, իսկ հարաւ արևմտեան անկիւնում, կմախքի ոտների մօտ՝ մի պուլիկ: Գերեզմանի ամբողջ արևելեան մասը բռնած էր մի եղան վառուած կմախք, որից վերցրի միայն մի վէգ, որովհետև գանգը այրուած էր: Զորրորդ դամբանը անհամեմատ փոքր էր, 5 մետր տրամագծով, շուրջանակի քարերով պատած և գետնից միայն մի մետր բարձր: Գերեզմանի երկարութիւնն էր 2,10 մետր, լայնու-

թիւնը 1 մետր, ուղղուած արեւելքից արեւմուտք, քառանկիւնի և հասարակ քարերով պատած: Գերեզմանը ամբողջովին լցուած էր հողով, որը մի մետրաչափ պեղելուց յետոյ բացուեց մի տղամարդու, մի կնոջ և մի երեխայի կմախք, իրար վրայ ածած և վառած: Տղամարդու մօտից դուրս եկաւ մի երկաթէ սուր, մի գաւազանի բրոնզէ գլուխ, մի երկաթէ ապարանջան, 2 բրոնզէ խողովակ, կնոջ մօտից մի բրոնզէ մանեակ, վեց հատ բրոնզէ ապարանջան մի ձեռից և մինը միւսից, մի ոսկորէ մատանի: Երեխայի ձեռից էլ դուրս եկաւ 2 բրոնզէ ապարանջան: Հիւսիսային պատի մօտ դրուած էր մի քասա և մի պուլիկ. մի պուլիկ էլ հարաւ արեւմտեան անկիւնում կար, ինչպէս և մի ուրիշը՝ մէջտեղում, ոսկորների մօտ:

Հինգերորդ դամբանը 6 մետր տրամագիծ ունէր. շրջապատուած էր մեծ մեծ քարերով, և զետնից մի մետր բարձրութեան էր, հարթ դադաթով. գերեզմանն ուղղուած էր արեւելքից արեւմուտք, ծածկուած 3 սալերով. երկարութիւնն էր 2,50 մետր, լայնութիւնը 1,35 մետր: Ամբողջովին լիքն էր հողով: $1\frac{1}{2}$ մետր խորութեան պեղելուց յետոյ բացուեց մի կմախք հիւսիսից հարաւ ուղղուած և վառուած: Սրա կողքից դուրս եկաւ մի բրոնզէ գօտի և մի բրոնզէ նիզակ: Ոտների մօտ, հարաւ արեւմտեան անկիւնում, գտնուած էր մի պուլիկ՝ մէջը մի բրոնզէ դաշոյն դրուած:

Վեցերորդ դամբանի տրամագիծն էր 6 մետր, գերեզմանն ուղղուած էր արեւելքից արեւմուտք, և ծածկուած 3 մեծ սալ քարերով. երկարութիւնն էր 2,80 մետր. լայնութիւնը 1 մետր, $1\frac{1}{2}$ մետր խորութեամբ դատարկ էր: Գերեզմանը 4 բարակ, 60 սանտիմետր բարձրութեան սալերով բաժանուած էր երկու մասի. արեւմտեան մասի երկարութիւնն էր 1 մետր, իսկ արեւելեանը 1,80 մետր: Արեւմտեան մասից $\frac{1}{2}$ մետրաչափ փորելուց յետոյ դուրս եկաւ մի տղամարդի, մի կնոջ և մի երեխայի երկարագլուխ կմախքներ. բոլորն էլ վառուած: Ոսկորների հետ դուրս եկան երեխայի մի բրոնզէ ապարանջան և մի նոյնպէս բրոնզէ ֆիրուլ: Երկրորդ, արեւելեան, մասի մէջ տեղում կար մի պուլիկ թաղուած, ամբողջովին մրով պատած: Քարերից նկատելի էր, որ այս մասում ևս մի բան այրուած էր, սակայն հետքը չկար, ոչ մի կտոր ոսկոր չերեաց:

Եօթերորդ դամբանի տրամագիծը 7 մետր էր, բարձրութիւնը 1 մետր. գերեզմանի երկարութիւնը 2, 25 մետր, լայնութիւնը $1\frac{1}{2}$ մետր, խորութիւնը 2 մետր. գերեզմանը ուղղուած էր արեւելքից արեւմուտք. պատած անտաշ քարերով, քառանկիւնի ձևով և դատարկ: Կէս մետրաչափ պեղելուց յետոյ բացուեց մի

երկարազուլուխ կմախք հիւսիսից հարաւ ուղղուած և վառուած: Ուտների մօտ կային 2 պուլիկ, մէջքին մի բրոնզէ գօտի, 1 բրոնզէ դաշոյն, 2 բրոնզէ խողովակ:

Ութերորդ դամբանը վեց մետր տրամագիծ ունէր, և միայն մի մետր բարձրութիւն, գազաթը հարթ էր, մեծ մեծ քարերով պատած: Գերեզմանը բացուեց մի մետրաչափ փորելուց և 3 սալաքարեր վերցնելուց յետոյ, ուղղուած էր արեւելքից արեւմուտք, քառանկիւնի էր և անտաշ քարերով պատած: Երկարութիւնն էր 2,80 մետր, լայնութիւնը 1 մետր, խորութիւնը 1,30 մետր, ամբողջովին հողով լցուած: Արեւմտեան կողմում կար մի տղամարդի, մի կնոջ և մի երեխայի երկարազուլուխ կմախքներ, բալորն էլ հիւսիսից հարաւ ուղղուած և վառուած: Թէ տղամարդու և թէ կնոջ մօտից դուրս եկան երկական բրոնզէ խողովակներ, տղամարդու թևից և ոտից մի մի բրոնզէ ապարանջան, մատից մի մատանի, կնոջ թևից բրոնզէ ապարանջան, ուլունքներ, և մի փոքրիկ, բրոնզէ մագիսիլ: Երեխայի մի ձեռից 2 և միւսից մի բրոնզէ ապարանջան: Գլխների և ոտների մօտ երկական պուլիկներ: Արեւելեան կողմը ևս մի կնոջ կմախք, նոյնպէս հիւսիսից հարաւ ուղղուած և վառուած: Սրա մօտից դուրս եկան ուլունքներ և մի շատ հետաքրքրական բան, որի ինչ լինելը դեռ չէ որոշուած:

Իններորդ դամբանի տրամագիծն էր եօթը մետր, բարձրութիւնը մի մետր, շուրջնակի պատած էր քարերով և գազաթը հարթ էր, գերեզմանը բացուեց ոչ թէ շրջանի ուղղակի մէջ տեղը, ինչպէս միւսները, այլ նրա հարաւային կողմը, երբ իզուր փորուած տեղից խաչաձև կտրեցինք դամբանը: Ծածկուած էր երեք մեծ սալերով, և ուղղուած արեւելքից արեւմուտք: Մի մետր լայնութիւն ունէր, 1½ մետր խորութիւն, և 2, 40 մետր երկարութիւն, որը, սակայն, մի մետր բարձրութեան անտաշ քարերով բաժանուած էր երկու մասի, արեւմտեան մասն աւելի ընդարձակ էր, 1,40 մետր երկարութեան, կէս մետրաչափ փորելուց յետոյ այս մասում երևեցաւ մի երկարազուլուխ տղամարդու կմախք, հիւսիսից հարաւ ուղղուած, և վառուած: Սրա մօտ գտնուեց մի բրոնզէ դաշոյն, մի բրոնզէ դանակ, 12 հատ բրոնզէ նետեր, մի բրոնզէ ֆիբուլ և բաւականաչափ ուլունքներ: Մի պուլիկ զլխի և մինը ոտի մօտ դրած:


Երկրորդ, արեւելեան մասը, աւելի փոքր էր, մի մետր երկարութեան և միւսնոյն լայնութեան և խորութեան, իւր մէջ պարունակում էր մի կնոջ երկարազուլուխ կմախք, դարձեալ հիւսիսից հարաւ ուղղուած և վառուած. վզին կային ուլունքներ, թևերին

երկու բրոնզէ ապարանջան, մատերին երեք նոյնպիսի մատանի, զլիսի մօտ դրած էր մի պուլիկ:

Տասերորդ դամբանը շատ մեծ էր, 19 մետր տրամագծով և գետնից 5 մետր բարձրութիւն ունէր. վերջանում էր հարթ գաղաթով. շուրջը պատած էր մեծ քարերով: Գերեզմանի ուղղութիւնն էր դարձեալ արեւելքից արեւմուտք, ծածկուած երեք մեծ սալաքարերով. երկարութիւնն էր 4 մետր, լայնութիւնը 2 մետր և խորութիւնը նոյնպէս երկու մետր: Գերեզմանն ամբողջովին լցուած էր հողով: Հիւսիս արեւելեան անկիւնում իրար վրայ ածուած էին 10 երկար գլուխներ, իսկ հարաւ արեւմտեան անկիւնում տասը կմախք, նոյնպէս իրար վրայ: Ո՛չ մի կմախք էլ չէր այրուած: Այս կմախքներից մինի վրայից գտնուեց մի բրոնզէ գօտի, ուրիշ ոչինչ:

Տասն և մէկերորդ դամբանը 15 մետր տրամագիծ ունէր, 3 մետր բարձրութիւն, շուրջանակի պատած էր մեծ մեծ քարերով և վերջանում հարթ գաղաթով: Գերեզմանն ուղղուած էր արեւելքից արեւմուտք, ծածկուած 3 մեծ սալերով և պատած անտաշ քարերով, երկարութիւնն էր 3 մետր, լայնութիւնը 2 մետր, $1\frac{1}{2}$ մետր խորութեամբ դատարկ էր: Կէս մետրաչափ պեղելուց յետոյ երեաց, որ սրա մէջ հիւսիսից հարաւ տառկած և վառուած էին մի տղամարդու, մի կնոջ և մի երեխայի երկարադուխ կմախքներ: Տղամարդու կմախքի վրայից դուրս եկաւ հինգ հատ ձեռի և 2 հատ ոտի բրոնզէ ապարանջան, երկու բրոնզէ խողովակ, կնոջ վրայից՝ մի բրոնզէ մանեակ, երեք բրոնզէ ապարանջան, մի ախանջի գինդ, երկու մատանի և վեց խխուճ, որ իրր դարդարանք են գործ ածուել: Երեխայի վրայից՝ մի բրոնզէ մանեակ, չորս բրոնզէ ապարանջան և 2 գինդ:

Տասներկուերորդ դամբանը բաւական մեծ էր, 21 մետր տրամագծով, շուրջանակի մեծ մեծ քարերով պատած և գետնի մակերևոյթից 3 մետր բարձր, հարթ գաղաթով: Գերեզմանը ուղղուած էր դարձեալ արեւելքից արեւմուտք, ծածկուած երեք մեծ սալերով, որոնք $3\frac{1}{2}$ մետր երկարութիւն ունէին. միջին սալը, որ ամենից լայնն էր, 1 մետր 50 սանտիմետր էր: Գերեզմանը քառանկիւնի էր, անտաշ քարերով պատած: Երկու մետր խորութեամբ դատարկ էր, և պատերը ձիւից սևացած: Կէս մետրաչափ փորելուց յետոյ դուրս եկաւ ջուր, շարունակեցինք պեղումը մի մետրաչափ ևս, և արեւելեան կողմում գտանք ձիւ այրուած ատամներ, մի բրոնզէ զեղեցիկ սանձ և մի բրոնզէ խողովակաձև դարդարանք: Ջրի խորութիւնը թոյլ չտուեց շարունակելու պեղումը:



ժԱ. ԴԱՄԲԱՆ

Տասերեքերորդ դամբանի տրամագիծն էր 21 մետր, բարձրությունը 3 մետր, հարթ գազաթուլ, շրջապատուած մեծ մեծ բարերով: Գերեզմանն ուղղուած էր արեւելքից արեւմուտք, քառանկիւնի էր, անտաշ մեծ քարերով պատած ու երեք մեծ սալերով ծածկուած, որոնցից ամենամեծը 2 մետր լայնութիւն ունէր: Երկարութիւնն էր չորս մետր, $1\frac{1}{2}$ մետր խորութեամբ դատարկ էր, պատերը ձխից սեւացած: Կէս մետր փորելուց յետոյ ջուր դուրս եկաւ, կէս մետր էլ փորեցինք և ջրի մէջ գտանք երկու երկարագլուխ կմախքներ հիւսիսից հարաւ պառկած և այրուած: Մի քիչ հեռու կային տաւարի ոսկորներ, նոյնպէս այրուած: Զրի միջից գտնուեց մի ոսկորէ շուրի Պեղումը ստիպուեցանք ընդհատել, երբ ջրի խորութիւնը մի մետրից անցկացաւ:

Տասչորսերորդ և Ժե դամբանները նոյնպէս շատ մեծ էին 19 և 21 մետր տրամագծով և 3 մետր բարձրութեան: Երկուսի գերեզմաններն էլ 2 մետրաչափ խորութեամբ դատարկ էին, պատերը ձխից սեւացած: Պեղումներ կատարելիս ջուր դուրս եկաւ, որը և խանգարեց կանոնաւոր հետազոտութեան: Մինի միջից միայն դուրս եկաւ ձիու այրուած դանդի կտորներ:

Տասնեկեցերորդ դամբանը այս խմբի ամենամեծն է, և բարձրանում է թէև նոյն շարքում, սակայն վերջին դամբանից մօտ 50 մետր հեռու: Տեղացիներից սա կոչւում է Բոլոր-դար, այսինքն կլոր բարձրութիւն, և իր այս անունը նա տուել է այս կողմի ամբողջ հարթութեան և դամբաններին: Թէպէտ կլոր է կոչւում, սակայն կլոր չէ, այլ ձուածկ, արեւելքից արեւմուտք ուղղուած: Երկարութեան տրամագիծն է 41 մետր, լայնութեանը 34 մետր: Մէջ թէ ուղղահայեաց, այլ բաւական թեք լանջերով է բարձրանում մօտ 6 մետր: Դադաթը տափարակ էր, փոքր ինչ զոգաւոր: Երկարութեան տրամագիծն է 25 մետր, լայնութեանը 18 մետր: Դամբանի ստորոտում շուրջանակի մեծ մեծ քարեր են շարուած, դադաթին չկան, երևի գիւղացիները տարել են, ինչպէս և՛ տարել են ստորոտի արեւելեան և հարաւային կողմի քարերը: Թէպէտ ամենից յարմար կըլինէր պեղել կողքից կամ խաչածակ, սակայն որովհետև այդ դէպքում հարկաւոր կըլինէր ամբողջ ութ մետր տարածութիւն իզուր կըտրել, ուստի ես պեղել տուի դադաթից, 8 մետր երկարութեամբ և 5 մետր լայնութեամբ: Չորս մետր խորութեան փորելուց յետոյ հանդիպեցանք անտաշ քարերով շարուած չորս պատերի, որոնք միմեանցից հեռու էին 6 մետր երկարութեամբ և չորս մետր լայնութեամբ: Պատերը մաքուր էին և այրուածի հետքեր չէին նկատուում: Շարունակելով պեղել այս պատերի միջև, մենք մեծ քարերի չպատահեցանք, ամբողջո-



ԺԶ. Դ Ա Մ Բ Ա Ն

վին ծովի աւազով էր լցուած: Երբ երկու մետր ևս խորացանք, դառնք մի տաշած քարից խնամքով պատրաստուած ֆաղիւս գերեզմանի մէջ տեղում պառկեցրած: Մրա բարձրութիւնը 1,30 մետր է, շրջապատը 1,10 մետր, գլուխը մեծ է և բոլորակաձև, ամբողջը կլոր է, միայն ներքին մասին քառանկիւնի ձև է տրուած պատուանդանի մէջ անցկացնելու նպատակով: Պատուանդան չունէր: Մի մետրաչափ ևս փորելուց յետոյ, երբ դամբանը շրջապատող դաշտի մակերևոյթից մի մետր խորացել էինք՝ բացուեց մի մեծ սալ քար, որի տակից դուրս եկաւ մի ձիու գանգ և առաջին ոռնները: Այսպիսի մեծ սալերով պատած էր ամբողջ յատակը, երբ հանում էինք այդ սալերը, բարձրից աւազը թափւում էր դամբանի մէջ, ուստի և ստիպուեցանք կրկին լայնացնել դամբանը, և ապա շարունակել, սալերը վերցնել, սակայն իսկոյն սալերի տակից շուր էր դուրս գալիս խորացրինք մի մետրաչափ ևս, սակայն ոչինչ չկարողացանք գտնել: Զուրը սասաիկ սառն էր և մշակները, որ մինչև գօտկատեղին ջրով ծածկուած էին, սաստիկ տրտնջում էին և չէին կամենում շարունակել խորացնել:

Ի նկատ առնելով՝ որ դամբանի շրջապատող դաշտի մակերևոյթից մենք ընդամենը երկու մետր էինք խորացրել, ևս ենթադրում էի, որ մօտ մի մետր էլ խորացնելուց յետոյ կը հասնենք կրմախքին, սակայն մշակները հնարաւորութիւն չունեցան շարունակելու, մանաւանդ որ ոչ մի յարմարաւոր գործիք չունէինք:

Յաւելով, որ մեծ դամբանների ննջեցեալները այնքան խորն են թաղուած, որ այժմ դժուար է հանել, որովհետև լճի մակերևոյթը բարձրացել է, ևս այլ ևս չփորձեցի այս շարքում եղած մեծ դամբանները պեղել և անցայ միւս շարքին, այս տեղ ևս զգուշանալով մեծ դամբանները փորելուց, թէպէտ և սրանք այստեղ շատ սակաւաթիւ էին:

Այս երրորդ շարքի դամբանները ևս միմեանցից հազիւ 3—5 մետր հեռաւորութեան վրայ են գտնուում, և բոլորն էլ կլոր են, շուրջանակի քարերով պատած: Հարթ գազաթների վրայ չեն նկատուում երկրորդ շրջանակ, միայն երբեմն գերեզմանի սալ քարերը երևում են, որովհետև շարունակ փչող քամին հետզհետէ տարել է սրանց վրայի հողաթմբերը: Կարելի է ենթադրել, որ այս շարքը աւելի նորագոյն ժամանակի է, քան առաջինը, որովհետև սրա միջից երևում են երկաթէ իրեր, մինչդեռ առաջինից գրեթէ բացառապէս բրոնզէ իրեր էին դուրս գալիս: Այս շարքից ևս պեղեցի 11 դամբան, որոնցից առանձին ուշադրութեան արժանի են միայն չորսը, որովհետև մնացածները մեծ մասամբ կանանց գերեզմաններ էին, արեւելքից արեւմուտք ուղղուած, որի մէջ

պառկած էին լինում մի մի կանացի կմախք, հիւսիսից հարաւ. մի երկու ապարանջան, ուլունքներ, ֆիբուլ և մի կամ մի քանի կաւէ աման կազմում էին սրանց ամբողջ հարստութիւնը: Այս պատճառով և՛ ես զանց եմ անում այդ 7 դամբանի մի առ մի նկարագրութիւնը:

25. Առանձին ուշադրութեան արժանի առաջին դամբանի տըրամագիծն էր $7\frac{1}{2}$ մետր, բարձրութիւնը դաշտի մակերևոյթից մի մետր: Գագաթը հարթ էր, և շուրջանակի մեծ մեծ քարերով պատած: Մի մետրահասի փոքրիկ յետոյ երևեցան երեք մեծ սալքարեր, որոնք վերցնելուց յետոյ բացուեց գերեզմանը քառանկիւնի, արևելքից արևմուտք ուղղուած, անտաշ քարի պատերով և ամբողջովին լցուած աւազախառն հողով: 1,60 մետր խորութեան փոքրիկ յետոյ երևաց, որ այս գերեզմանում հանգստանում էին մի տղամարդու, նրա կնոջ, երեխայի և հաւանօրէն երեք ծառաների կամ մօտիկների ոսկորները: Տղամարդը պառկած էր գերեզմանի արևմտեան կողմը, հիւսիսից հարաւ, ձախ կողքի վրայ, ոտները կուճ բերած և երեսը դէպի կիճն ուղղած, որ նոյն ձևով պառկած էր գերեզմանի արևելեան կողմը, միայն աջ կողմի վրայ, այնպէս որ սա էլ իւր երեսը ամուսնուն էր դարձրել: Երկուսի միջև պառկած էր փոքրիկ երեխան, նոյնպէս հիւսիսից հարաւ: Սրանց գլխի վերև, հիւսիսային պատին կից, պըպըզած դրութեամբ կային երկու տղամարդու կմախք, մինն էլ հարաւային պատի մօտ, դարձեալ պըպըզած ձևով: Բոլորն էլ երկարազուլի էին, բոլորն էլ այրուած: Գերեզմանը բաւական հարուստ էր բրոնզէ և երկաթէ իրերով ու կաւէ ամաններով: Արևմտեան կողմի տղամարդու, ըստ իս՝ գերեզմանի տիրոջ, մօտ գտնուեց վզին՝ մի մանեակ, մէջքին՝ մի բրոնզէ և մի երկաթէ դաշոյն, ձեռներին 3 բրոնզէ ապարանջան, մատին՝ մի բրոնզէ մատանի, ոտներին՝ հինգ բրոնզէ ապարանջան, փոքր ինչ հեռու էլ 2 բրոնզէ նետ. արևելեան կողմում պառկած կնոջ մօտից դուրս եկաւ՝ մի վզի մանեակ, երկու բրոնզէ խողովակ, երկու բրոնզէ ապարանջան, և մի մատանի: Երեխի ձեռքի տակ գտնուեց մի բրոնզէ սվաստիկա, մօտը մի բրոնզէ խողովակ, թևերին բրոնզէ ապարանջան: Հիւսիսային պատին կից պըպըզած կմախքներից արևմտակողմինի վրայ գտնուեց միայն մի բրոնզէ դաշոյն. իսկ արևելակողմինի վրայ մի բրոնզէ դօտի, մի երկաթէ թուր, մի ոտի բրոնզէ ապարանջան:

Հարաւային պատի մօտ պըպըզած կմախքի մօտ գտնուեց մի վզի բրոնզէ մանեակ, մի երկաթէ դաշոյն, մի ձեռի և մի ոտի ապարանջան:

Բոլոր կմախքների մօտ դրուած էին կաւէ ամաններ, որոնց

բոլորի թիւը 22 էր, դասաւորուած հետեւեալ կարգով: Արեւմտեան կմախքի սնարի մօտ դրուած էր մի քասա և մի կուլա, փոքր ինչ հեռու՝ չորս պուլիկներ: Այս տղամարդու և երեխայի կմախքի միջև հինգ փոքրիկ կարասներ, հիւսիսային կողմի արեւմտեան կմախքի առաջ մի, իսկ արեւելեանի առաջ վեց պուլիկ, և հարաւային կմախքի առաջ չորս պուլիկ:

26. Երկրորդ դամբանի տրամագիծն էր 9 մետր, բարձրութիւնը 1 մետր: Գերեզմանը ուղղուած էր արեւելքից արեւմուտք, բառանկիւնի էր, անտաշ քարերով պատած, 2,15 մետր երկարութեան, 1,25 մետր լայնութեան և 2,20 մետր խորութեան, ծածկուած երեք մեծ սալքարերով:

Գերեզմանի արեւմտեան կողմը հիւսիսից հարաւ պառկած էր մի երկարադուխ կմախք, աջ կողքի վրայ: Գլխի շուրջը շարուած էին չորս քարեր, թէ կմախքն էր այրուած և թէ քարերը յորոտուած: Կմախքի առաջ կար մի պուլիկ, ձեւին 2 բրոնզէ ապարանջան և կողքին մի երկաթէ դաշոյն:

27. Երրորդ դամբանի տրամագիծն էր 6 մետր, բարձրութիւնը 1 մետր, գերեզմանը, որ ուղղուած էր արեւելքից արեւմուտք և ծածկուած 3 սալերով, քառանկիւնի էր, անտաշ քարերով պատած և մի մետրաչափ դատարկ: Երկարութիւնն էր $2\frac{1}{2}$, լայնութիւնը 1 մետր: Կէս մետրաչափ փորելուց յետոյ բացուեց մի երկարադուխ կմախք, հիւսիսից հարաւ պառկած և այրուած. սրա մէջքին կար մի սքանչելի բրոնզէ դօտի, մօտը մի երկաթէ թուր, մի բրոնզէ դանակ, մի քիչ հեռու 2 բրոնզէ նետ, մի բրոնզէ դաշոյն, 5 բրոնզէ ապարանջան և մի բրոնզէ ֆիբուլ: Հիւսիսային կողմում դրուած էր մի պուլիկ, որի մէջ կար մի բրոնզէ դաշոյնի երախակալ. երկու պուլիկ էլ դրուած էին արեւելեան և հիւսիսարեւելեան կողմերում:

28. Չորրորդ դամբանը գտնուում էր այս շարքի ամենահիւսիսային ծայրում, Բոլոր-դարից էլ այն կողմը: Սրա շրջապատն էր 5 մետր, բարձրութիւնը 1 մետր: Շուրջանակի պատած էր քարերով, սակայն քարերից շատերը տարուած էին: Մի մետրաչափ փորելուց յետոյ, բացուեցան երկու դամբան, միմեանցից միջնորմով բաժանուած և իւրաքանչիւրն առանձնապէս երեքական սալերով ծածկուած: Երկու գերեզմաններն էլ ուղղուած էին արեւելքից արեւմուտք, երկուսն էլ քառանկիւնի էին, անտաշ քարերով պատած: Առաջինի երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը 1 մետր, լցուած էր ծովի աւազով: 1,10 մետր փորելուց յետոյ դատանք մի այրուած աղդոսկր, հիւսիսից հարաւ ուղղուած, մի քիչ հեռու մի բրոնզէ դաշոյն և 2 հատ վանակատի նետ:

Միւս գերեզմանը նոյնպէս գրեթէ նոյն մեծութեան էր, այստեղ ևս գտնուեցին այրուած ոսկորներ, որոնք ցոյց էին տալիս, որ դիակը նախքան այրելը հիւսիսից հարաւ է ուղղուած եղել: Այս տեղից էլ գտնուեց մի բրոնզէ դաշոյն և 9 հատ վանակատի նետեր: Ոչ մի պուլիկ չկար երկու գերեզմանի մէջն էլ:

29—32. Այս շարքերից դուրս այս ու այն կողմը մէկուսի ընկած դամբաններից էլ պեղեցի երեքն, սակայն առանձին հետաքրքրութեան արժանի բան չգտայ. սրանք էլ միևնոյն տեսակի էին և աղքատ, հազիւ մի երկու մատանի կամ ապարանջան ներփակում էին իւրեանց մէջ թաղուած և այրած կմախքների հետ: Այս պատճառով և՛ բաւականացայ այս չափով և անցայ գիւղի արևմտահարաւային կողմը, գիւղից մօտ մի կիլոմետր հեռու, ուր մի ժայռապատ բլրի լանջին, որ յայտնի է «Պաչքարի տակ» անունով, գտայ բաւականաչափ դամբաններ:

32—37. Պեղելով սրանցից 5 հատ ևս համոզուեցի, որ սրանք պատկանում են այն շրջանին, երբ դիակները չէին այրում, ինչպէս «Բոլոր—դարի» դամբաններինը, այլ թաղում էին՝ հիւսիսից հարաւ ուղղուած: Սրանց միջից գրեթէ առանց բացառութեան բրոնզէ իրեր էին դուրս գալիս:

Այս դամբանները բոլորն էլ գեանի մակերևոյթից մօտ կէս մետր բարձրութիւն ունին, կլոր են, 3—5 մետր տրամագծով և շուրջանակի քարերով պատած: Սրանց միջի գերեզմանը ուղղուած է հիւսիսից հարաւ, մօտաւորապէս 2 մետր երկարութեան, 1 մետր լայնութեան և $1\frac{1}{2}$ մետր խորութեան, քառանկիւնի և անտաշ քարերով պատած: Ամեն մի գերեզմանի մէջ կար միայն մի կմախք, հիւսիսից հարաւ պառկած, մօտը մի քանի պուլիկ, բրոնզէ ապարանջան, մատանիներ և այլն: Այս դամբաններից դուրս եկած իրերից ամենահետաքրքրականը մի ֆիբուլ է, որ ներկայացնում է երկզլխանի մի թռչուն: Այդ դամբանում կար միայն մի երկարազուլիս, կանացի կմախք, ոտների մօտ մի քասա, ձեռքին 2 և ոտին 3 բրոնզէ ապարանջան, մի մատանի, մի բրոնզէ խողովակ և վերոյիշեալ ֆիբուլը:

«Պաչքարի տակ» կոչուած բլրի հանդէպ, լճի անմիջապէս ափին բարձրանում է մի ուրիշ բլուր, ուր նոյնպէս կայ դամբաններ: Զաղալուեցիները այս դամբանները սատանաների բնակարաններ համարելով բլուրը կոչել են Սասանի սանիս—սատանի տուն:

Այս դամբանները միաձև են, կլոր, շուրջանակի մեծ մեծ քարերով պատած, 3—4 մետր տրամագծով, գետնից հազիւ $\frac{1}{2}$ մետր բարձրութեան: Գերեզմանն ուղղուած է արևելքից արև-

մուտք, քառանկիւնի է, անտաշ քարերով պատած և ծածկուած մեծ մասամբ երեք, երբեմն և երկու սալ քարերով: Ընդհանրապէս գերեզմանի երկարութիւնը լինում է 1 $\frac{1}{2}$ մետր, լայնութիւնը 1 մետր և խորութիւնը 1—1, 25 մետր: Բոլորն էլ լքցուած են լինում աւաղախառն հողով: Մեծ մասամբ իւրաքանչիւր գերեզմանում թաղուած է լինում միայն մի ննջեցեալ, հիւսիսից հարաւ ուղղուած, այսինքն գերեզմանի լանքսին, աջ կողքի վրայ, ոտները կուճ բերած և երեսը դէպի արեւմտ-հարաւ ուղղուած: Պատահում են նաեւ, որ միեւնոյն գերեզմանում երկու և երբեմն աւելի կմախքներ են լինում, մինը, աւելի պատուաւորը, գերեզմանի արեւմտեան մասում, միւսը՝ արեւելեան:

38. Առաջին դամբանում պառկած էր երկարագլուխ մի կնոջ կմախք, հիւսիսից հարաւ, որի մօտից գտնուեց 2 բրոնզէ ապարանջան, մի բրոնզէ խողովակ և մի քիչ ուլունք:

39. Երկրորդ դամբանը նոյնպէս կնոջ էր, հիւսիսից հարաւ պառկած. մօտից դուրս եկաւ մի բրոնզէ ապարանջան, մի բրոնզէ դօտի, մի ոսկորէ ժառանգի և մի վանակատի դանակ:

40. Երրորդ դամբանի արեւմտեան կողմում հիւսիսից հարաւ պառկած էր մի տղամարդ, իսկ արեւելեան կողմում՝ մի կին՝ երեսները միմեանց դարձրած: Սրանց ոտները կողմը, արեւմուտքից արեւելք պառկած էր մի յաղթանդամ տղամարդ: Արեւմտեան մասում թաղուած տղամարդու մօտ էլ կար տաւարի ոսկորներ, որոնցից վերջրի վէզը: Այս տղամարդու մօտ, որի գանգը և ազդրերը վերջրի, գտնուեց մի երկաթէ թուր, բրոնզէ երախակալով, մի երկաթէ նիզակ, մի բրոնզէ նիւ: Կնոջ մօտից դուրս եկաւ երկու դոյզ բրոնզէ ապարանջան, 2 բրոնզէ խողովակ, 3 բրոնզէ մատանի և ուլունքներ: Ոտների մօտ պառկած տղամարդու մօտից էլ դուրս եկաւ մի բրոնզէ դօտի և մի բրոնզէ դաշոյն: Երկու պուլիկներ էլ զրուած էին մինը տղամարդի, միւսը կնոջ գլխնե-
րի մօտ:

41. Չորրորդ դամբանը բաւական նման էր երրորդին. այստեղ ևս կային երկու, մի տղամարդու և մի կնոջ, երկարագլուխ կմախք, տղամարդը արեւմտեան, կինը արեւելեան կողմը պառկած, միայն տղամարդը հարաւից հիւսիս, իսկ կինը՝ հիւսիսից հարաւ: Երեսները դարձեալ միմեանց դարձրած: Տղամարդու մօտից գտնուեց մի բրոնզէ դաշոյն և 2 բրոնզէ ոտի ապարանջան, իսկ կնոջ մօտից միայն ուլունքներ:

42. Հինգերորդ դամբանի արեւմտեան կողմում պըպըղած ձևով կային երկու երկարագլուխ տղամարդկանց կմախք, որոնցից մինի մօտ գտնուեց մի երկաթէ դաշոյն, բրոնզէ պատեանով,

ձեռի 2 և ոտի 2 բրոնզե ապարանջան, 2 բրոնզե խողովակ: Միևսի մօտ մի երկաթէ և երկու բրոնզէ, մինը մեծ և միւսը փոքր դաշոյններ: Հիւսիս արևմտեան անկիւնում դրուած էին 2 պուլիկներ: Այս երկու կմախքների գանգերն էլ վերցրի:

43. Վեցերորդ դամբանը ներփակում էր իւր մէջ մի երկաթազուլի կնոջ և մի երեսայի կմախք, հիւսիսից հարաւ պառկած: Երեսայի մօտ դրուած էր մի փոքրիկ պուլիկ. կնոջ ձեռին կար մի բրոնզէ ապարանջան, նոյնպիսի մինն էլ երեսայի ձեռին:

44. Եօթերորդ դամբանի արևմտեան կողմում պառկած էր մի երկաթազուլի տղամարդու, իսկ արևելեանում՝ մի նոյնպիսի կնոջ կմախք, երեսները միմեանց դարձրած. գլխների մօտ դրուած էր մի մի պուլիկ: Տղամարդու մօտից գտնուեց մի բրոնզէ դաշոյն, մի բրոնզէ նիզակ, նիզակի բրոնզէ օղեր, մի բրոնզէ խողովակ, մի բրոնզէ քամանդ, ոտերի բրոնզէ երեք ապարանջան, կնոջ մօտից երկու հատ ձեռի բրոնզէ ապարանջան, բւլունքներ և մի հատ ոսկորէ օղակ:

45—51. Սատանի տանիսից մօտ 100 մետր դէպի արևմուտք, դարձեալ լճի ափին բարձրանում է մի ուրիշ բլուր, որ կոչւում է՝ «Գիւղ-տանիս» — դեի տուն և որի վրայ նոյնպէս կան դամբաններ: Սրանք թէև շուրջանակի պատած են քարերով, սակայն իրենց վրայ թմբեր չունեն, հաւանօրէն քամին տարել է: Միջանիսի գերեզմանաքարերն արդէն իսկ երևում են, միւսները բացւում են, հէնց որ միքիչ փորում են: Սրանք ևս միանգամայն նման են Սատանի տանիսի դամբաններին, ուղղուած են արևելքից արևմուտք, միայն կմախքները դրուած են հիւսիսից հարաւ: Այս դամբաններից շատերը վերջին ժամանակներս բացուած են և թուրքեր թաղուած, այս պատճառով և՛ թէպէտ արտաքին տեսքը անեղծ մնացել է, սակայն իսկական կմախքները կամ հանուած են և խառնի խուռն մի կողմ ածուած և կամ բաւական խորը թաղուած լինելով, ազատ են մնացել աւերիչ ձեռքերից: Սրանցից պեղեցի 10 հատ, որոնցից առանձին ուշադրութեան արժանի են հետևեալ երեքը

52. Առաջինը 5 մետր տրամագիծ ունէր, շուրջանակի քարերով պատած. մէջտեղում երևում էին երկու մեծ սալեր, մինը $1\frac{1}{2}$ մետր, միւսը 1 մետր լայնութեան և մօտ 2 մետր երկարութեան: Այս քարերը վերցնելուց յետոյ բացուեց գերեզմանը՝ արևելքից արևմուտք ուղղուած, $2\frac{1}{2}$ մետր երկարութեան, մի մետր լայնութեան, ամբողջովին աւազախառն հողով լցուած: Գերեզմանը քառանկիւնի էր, անտաշ քարերով պատ քաշած: $1\frac{1}{2}$ մետր փորելուց յետոյ բացուեց մի երկաթազուլի մարդու կմախք,

գլուխը հիւսիս արևելեան անկիւնում, ոտները հարաւ-արևմտեան, երեսը դէպի հարաւ դարձրած: Սրա ձևովին գտնուեց 5 բրոնզէ ապարանջան, մի բրոնզէ դաշոյն, մի բրոնզէ խողովակ: Մի քսաադրուած էր գլխի յետևը, ուրիշ երկուսն էլ հիւսիս արևմտեան անկիւնում:

53. Երկրորդ դամբանը աւելի մեծ էր, 6 մետր տրամագծով, շրջապատուած քարերով. մէջտեղում երևում էին երեք սալաքար, որոնց վերջնելուց յետոյ բացուեց գերեզմանը՝ արևելքից արևմուտք, սակայն սրա մէջ մօտ ժամանակներս մի քիւրդ էին թաղել: Հողերի միջից դուրս եկաւ մի բրոնզէ դօտի և ոտի մի մեծ բրոնզէ ապարանջան:

54. Երրորդ դամբանը, որ նման էր երկրորդին թէ իւր տեքով և թէ իւր վիճակով, բացուած էր եղել. որովհետև կմախք չկար և հողի միջից գտնուեց մի բրոնզէ կոտրատուած դօտի, մի բրոնզէ ապարանջան և մի բրոնզէ խողովակ:

Դեի տանիքից մօտ յիսուն մետր հեռու, հարթութեան վրայ, «Տէրաէրի» արտի մէջ ևս կան միքանի մեծ դամբաններ, որոնցից պեղեցի երկուսը:

55. Սրանցից առաջինը կլոր էր, 23 մետր տրամագծով, շուրջանակի մեծ մեծ քարեր շարուած: Բարձրութիւնը դաշտի մակերևոյթից հասնում էր չորս մետրի, գագաթը տափարակ էր, և չունէր երկրորդ շրջանակը: Պեղեցինք կողքից, գերեզմանը քառանկիւնի էր, չորս ահագին սալերով ծածկուած, հիւսիսից հարաւ ուղղուած, և անոռշ, մեծ քարերով պատ քաշած: Երկարութիւնն էր 7 մետր, լայնութիւնը 4 մետր: Չորս մետրաչափ խորութեան դատարկ էր: Երկու մետրաչափ էլ մենք պեղեցինք, սակայն ձիու ու մարդու ատամներից և մի քանի ձիու բրոնզէ դարդարանքներից դատ բան չդատանք: Բրոնզէ դարդարանքներն էլ սաստիկ փթած էին և շուտով փշրուեցան:

56. Երկրորդ դամբանը համեմատաբար փոքր էր, 15 մետր տրամագծով, շուրջանակի քարեր շարուած: Բարձրութիւնը 3 մետր էր, և վերջանում էր հարթ գագաթով: Պեղեցինք կողքից, գերեզմանը քառանկիւնի էր, արևելքից արևմուտք ուղղուած, ծածկուած 3 ահագին սալերով: Անոռշ քարերով պատ էր քաշած: Երկարութիւնը 8, 50 մետր էր, լայնութիւնը 6 մետր, 3 մետր խորութեամբ՝ դատարկ էր: Մօտ երկու մետրաչափ պեղեցինք, դուրս եկաւ հիւսիսից հարաւ ուղղուած մէկ տղամարդու և մի ձիու սաստիկ փթած ոսկորներ և ձիու չորս բրոնզէ դարդարանք:

57. Այս դամբարանից էլ մօտ 70 մետր հեռու, Չաղալու և Եարփուղլու գիւղերի սահմանադիտում, ճանապարհին կից բաքձ-

բանում է մի մեծ դամբան։ Սա ձուռածիւր է, արեւելքից արեւմուտք ուղղուած։ Մեծ տրամագիծը հասնում է 45 մետրի, իսկ փոքրը՝ 40 մետրի։ Հետզհետէ բարձրանալով մինչև 6 մետր՝ վերջանում է տափարակ, կլոր դագաթով, որ 30 մետր տրամագիծ ունի։ Դամբանի ստորոտում շուրջանակի մեծ մեծ քարեր են շարուած։ Գազաթին ևս նկատելի են քարեր, սակայն շրջանակն արդէն անհետացած է, որովհետև քիւրդերի գերեզմաններ են փորուած վերան և մի քանի անյաջող փորձեր են կատարուած՝ պեղելու։ Ամբողջ դամբանը պատած էր խոտով։ Գերեզմանի ամենափոքր սալը գտնելու յուսով ևս պեղել տուի արեւելքից դէպի արեւմուտք, և հիւսիսից դէպի հարաւ։ 4, 30 մետր խորութեան վրայ, դամբանի հիւսիսային կողմում բացուեցան բաւական մեծ սալքարեր, որոնցից մինը վերցնելով՝ մտանք գերեզմանի մէջ։ Սա 2, 80 մետր խորութեամբ դատարկ էր, ուղղուած հիւսիսից հարաւ, քառակիւնի և մեծ անտաշ քարերով պատ քաշած։ Մածկուած էր չորս երկար և լայն սալերով։ Երկարութիւնն էր 6, 60 մետր, լայնութիւնը 2, 80 մետր։ Արեւմտեան կողմից պատը մէկ ու կէս մետրահասի քանդուած էր և այստեղից նոյն մեծութեան մի անցք էր՝ ձգուած դէպի արեւմուտք 7 մետր երկարութեամբ։ Շրջելով այրի մէջ, նկատեցինք, որ հարաւային կողմը ցեխի պատով բաժանուած է, որի միայն մի մասը քանդուած էր. ներս նայեցինք և տեսանք, որ մի մարդկային կմախք աճիւնացած պարկած է, վերցրել մի քիչ այդ աճիւնից և մնացածը լաւ դնեցի մի որեւէ բան գտնելու յուսով, բայց ոչինչ չգտայ։ Այն միայն նկատեցի, որ ննջեցեալը պառկած է եղել հիւսիսից հարաւ։ Սրա մօտ մի ուրիշ բաժանմունք էլ կար, նոյնպէս ցեխէ պատով բաժանուած։ Նկատելի էր՝ որ նախ փայտէ սիւններ են խփել և ապա սրանց օգնութեամբ ցեխէ պատ կանգնեցրել։ Փայտերն արդէն բոլորովին փթել էին։ Այստեղ պառկած էր մի ձի, ամբողջովին փոշիացած, միայն ստամոքիքը դեռ ևս անփութ էին, ուստի և ևս վերցրի, աւելացնելով վերան նաև փոքր ինչ աճիւն։ Զննելով ձիու աճիւնը գտանք հետեւեալ բրոնզէ զարդարանքները, 2 հատ կրծքին կախելու կիսալուսիններ, բրոնզից 4 հատ մեծ կոճականման զարդարանքներ, 2 զանգականման զարդարանք։

Ապա սկսեցինք պեղել գետինը, ճրագներով նայել ամեն անկիւն, և երբ այլ ևս ոչ մի բան չգտանք, համոզուեցինք, որ արեւմտեան կողմից ձգուող ականք յատուկ փորուած է, ով գիտէ երբ, ննջեցեալի մօտի իրերը գողանալու նպատակով։

58. Այս դամբանից բարձր, Եարփուղլու թրքաբնակ գիւղի արտերի մէջ, «Եարտալա» կոչուած տեղում ևս պեղեցի մի

գեղեցիկ դամբան, որ կուր էր, 25 մետր տրամագծով, և 4 մետր բարձրութեան: Շրջապատուած էր մեծ մեծ քարերով և վերջահում էր հարթ գազաթով: Գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, 6 մետր երկարութեան էր, 3,60 մետր լայնութեան: Երկու մետր խորութեամբ դատարկ էր, քառանկիւնի, անտաշ, մեծ քարերով պատած և 3 մեծ սալերով ծածկուած: Դժբաղդաբար սրա էլ արեւելեան պատի քարերից մի քանիսն հանուած էին: Մի մետրից աւելի պեղելուց յետոյ գտանք մի երկարագլուխ այրուած կմախք, հիւսիսից հարաւ ուղղուած, մօտը կար մի բրոնզէ գիւրդ, երկու բրոնզէ նետ և մի բրոնզէ ապարանջան, ուրիշ ոչինչ: Կարելի է ենթադրել, որ այս դամբանը ևս անձնական էր չէր մնացել:

59. Նոյն վիճակին ենթարկուած է եղել և՛ մի ուրիշ, մեծ դամբան, որ բարձրանում է առաջին մեծ դամբանի հանդէպ: Սա ևս արտաբուստ մի բլուր էր ձևացնում. 18 մետր տրամագծով և 4 մետր բարձրութեամբ, սուր գագաթով: Շուրջը քարեր չուկային, ոչ էլ գազաթին: Մօտ վեց մետր խորութեան պեղելուց յետոյ բացուեցան երեք քարեր, որոնց միջև ձգուած էր և մի փոքր: Այս վերջինը ծայրէ ի ծայր չէր հասնում, այլ երկու մեծ սալերի միջև թողնուած փոքրիկ անցքն էր ծածկում: Այս անցքից մենք մտանք ներս. 3 մետր խորութեամբ մի դատարկ, քառանկիւնի գերեզման էր, անտաշ քայով պատած: Երկարութիւնը 6 մետր էր, լայնութիւնը 4 մետր: Գերեզմանը սկսեցինք պեղել, 2 մետրաչափ պեղելուց յետոյ գտանք մի ոսկորէ կոճակ, այս մեզ խրախուսեց և մենք շարունակեցինք պեղումը, 3 մետրաչափ էլ պեղեցինք, հոգը վեղբաներով դուրս քաշելով, այս անգամ գտանք մի բրոնզէ ֆիբուլ. կրկին շարունակեցինք պեղումը երկու մետրաչափ, ապա՛ն ոչինչ չգտանք, սովորական աւազն էր, որ հեշտութեամբ փորում էր: Չորրորդ օրը այլ ևս ոչ մի բանի չպատահելով՝ որոշեցինք ընդհատել, ենթադրելով, որ կամ պեղուած է և կամ զոգացուած, մանաւանդ որ դուրս էին գալիս ոսկորների մանր կտորներ, կտորատուած պուլիկներ:

60—65. Այս դամբանից փոքր ինչ հեռու կան երեք ուրիշ դամբաններ, որոնք լճափի փոքրիկ ցածր ու հարթ տարածութեան անմիջապէս կալած լինելով, այդ կողմից բացուել են, կամ բացել են: Սրանք էլ մեր բացած դամբանների նման մեծ քարերով պատած և 3 կամ չորս սալքարերով ծածկուած, 3 մետրից սուելի խորութեամբ դատարկ գերեզմաններ են, որոնց յատակը 1—2 մետրաչափ պեղել տուի, կարծելով թէ այս բարձրաւանդակի եզրի

փլչելովն են մի կողմից բացուել, հետեւապէս և՛ դեռ ևս անեղծ են, սակայն ոչինչ չգտայ:

Այս անյաջողութիւնը և՛ մասամբ այս կողմերում բռնկած հայ-թրքական ընդհարումներն ստիպեցին թերի թողնել արդէն կիսով չափ պեղած երեք ուրիշ դամբաններ և հեռանալ դէպի Ալի-զըռըր:

66. Անցնելով Գեօսալ-բուլաղ հայաբնակ գիւղով, ես մի գիւղացու ցուցմամբ պեղեցի մի դամբան, որ գտնուեմ էր գիւղի հանգիստակած բլրի լանջին: Դամբանի տրամագիծն էր 15 մետր, բարձրութիւնը 3 մետր. շուրջանակի ունէր մեծ մեծ քարեր և վերջանում էր հարթ գագաթով: Գերեզմանը քառանկիւնի էր, հիւսիսից հարաւ ուղղուած և երեք մեծ սալերով ծածկուած: Թէպէտ շուրջը անտաշ քարերով պատ էր քաշած, սակայն ամբողջ գերեզմանը լի էր աւազախառն հողով: Երկարութիւնն էր 3 մետր, լայնութիւնը $1\frac{1}{2}$ մետր: Մօտ 2 մետր պեղելուց յետոյ բացուեց մի երկարագլուխ կմախք, հիւսիսից հարաւ ուղղուած, կողքին մի երկաթէ երկար թուր՝ բրոնզէ երախակալով, ինչպէս նաև 2 պուլիկ:

67—69. Գեօտակ-բուլաղից անցայ Փեօլանի-ղըռըր, ուր գտնուեմ է մի հինաւուրց ամրոցի հիմքեր և մի սեպածև արձանագրութիւն՝ այս ամրոցի անմիջապէս մօտը՝ լճափին: Որոնելով ամրոցի շուրջը դամբաններ, ես կարողացայ միայն երեք հատ գտնել, որը և՛ պեղեցի: Սրանցից մինը գտնուեմ էր ամրոցի արեւմտահարաւային կողմը, մի բլրի գագաթի: Կլոր էր, շուրջանակի քարերով պատած, 7 մետր տրամագիծով: Երկու մեծ սալեր վերցնելուց յետոյ բացուեց գերեզմանը, որ տաշած քարով պատած էր. երկարութիւնն էր 3 մետր, լայնութիւնը 1,50 մետր. ամբողջովին լիքն էր հողով: Մօտ 2 մետր պեղելուց յետոյ բացուեց մի երկարագլուխ կմախք, հիւսիսից հարաւ ուղղուած և սաստիկ փթած: Մօտը ոչ մի իր կամ պուլիկ չգտնուեց:

Այսպէս էին նաև միւս երկու դամբանները, դարձեալ հիւսիսից հարաւ ուղղուած գերեզմաններով, և մի մի կմախքներով: Միայն սրանք պատեր չունէին, այլ մի մեծ սալ ձգուած էր յատակին, ու ննջեցեալը դրա վրայ պառկեցրած:

Յուլիսի 20-ին անցայ Ալիղըռըր, որ տեղաւորուած է Սևասայ լճի հարաւային ափին, մօտ 4 կիլոմետր հեռու, մի բարձրութեան վրայ: Սրա արեւմտահարաւային կողմում ևս, մի սարի գագաթի վրայ նկատելի է մի հինաւուրց ամրոցի հետքեր: Այս սարի թէ լանջին և՛ թէ ստորոտում կան դամբաններ, որոնք այնքան էլ մեծ չեն, մինչդեռ այստեղից 3-4 կիլոմետր հեռու, «Ղախ ետեւ» (քարակոյտի ետև) կոչուած տեղում կան անհամեմատ աւել-

լի մեծերը: Եւ որովհետեւ այստեղ չկարողացանք շատ մշակներ գտնել, ուստի և ստիպուեցայ հրաժարուել այդ մեծ դամբանները պեղելու մասագրութիւնից և պեղեցի այս ամբողջի ստորոտում գտնուած դամբաններից միայն վեցը:

70. Սրանց մէջ ամենահետաքրքրականը այն էր, որ գտնուում էր արտերի մէջ, հարթութեան վրայ, համեմատաբար աւելի մօտիկ լճին: Սա կլոր էր, 5 մետր տրամագծով, շուրջանակի մեծ մեծ բարերով պատած և գետնից մի մետր բարձր, հարթ զագաթով: Գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, ծածկուած երեք մեծ սալքարերով: Քառանկիւնի էր և անտաշ քարով պատած: Երկարութիւնն էր 3 մետր, լայնութիւնը 2 մետր: Ամբողջովին լրացուած էր աւազախառն հողով: Երկու մետրաչափ փորելով գտանք հինգ երկարադուխ տղամարդկանց կմախքներ, գերեզմանի հաւաքային կողմում պըպըզած, երեսները դէպի հարաւ: Սրանցից ամէն մինի մօտ կար մի մի բրոնզէ դաշոյն, իսկ մինի մօտ նաեւ ձեռի մէկ և ոտի երկու բրոնզէ ապարանջան: Ոտի երկու ապարանջանները մի մատանիով միացած էին և ձգուած աջ ոտը: Կմախքների շուրջը շարուած էին հինգ պուլիկներ:

71—75. Միւս հինգ գերեզմանները միատեսակ էին, կլոր, 3—4 մետր տրամագծով, շուրջանակի քարեր շարուած, գետնին հաւասար կամ հազիւ կէս մետր բարձր: Գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, քառանկիւնի էր, անտաշ քարով պատած և առաւելապէս մի մեծ սալով ծածկուած: Երկարութիւնը 2—2 1/2 մետր, լայնութիւնը 1 մետր, խորութիւնը մինչև 1 1/2 մետր: Սրանց մէջ պահւած էր լինում միայն մի կմախք, մեծ մասամբ կնոջ, հիւսիսից հարաւ, ձեռին բրոնզէ ապարանջան, մատանի և ուլունքներ, կողքին մի կամ մի քանի պուլիկ:

76—78. Ալիզըռըղից անցայ սրանից մօտ մի կլիմետր հեռու գտնուող Զոլախաչ գիւղը, ուր նոյնպէս 3 դամբաններ քաց արի: Սրանք ևս միանգամայն նման էին վերոյիշեալ հինգ դամբաններին և քացի մի հիւսիսից հարաւ ուղղուած երկարադուխ կմախքից, մի երկու բրոնզէ ապարանջանից և պուլիկից ուրիշ ոչինչ չէին ներփակում:

79—80. Ապա անցայ վերին Վարանլըղ, որ դարձեալ շատ հեռու չէ Ալիզըռըղից: Այստեղ, գետակի ափին քացի երկու դամբան. արտաքուստ շուրջանակի քարեր էին շարուած և մի սալքար երևում էր. սալքարը վերցնելով քացուց մի կարաս՝ ուղղա հայեաց և բերանը դէպի վեր, որի մէջ պըպըզած ձևով մի երկարադուխ կմախք կար, սաստիկ փթած: Կարասը արդէն կոտրատուել էր, այնպէս որ վերցնել չկարողացայ: Այդ երկու

նոյնանման դամբանների մէջ ոչ պուլիկ և ոչ էլ մի որեւէ իր չկարողացայ գտնել:

Յուլիսի 25-ին անցայ Ղուլալի գիւղը, որ գտնւում է Նոր-Բայազետ քաղաքի մօտ, հազիւ երկու կիլոմետր հեռու: Շրջնում գիւղի շրջակայքը եւս դամբաններ նկատեցի Սազախաչի տակը: Կալերի վերեւը, Տիկնաձորում, Նաջարի-դարում, Գասոյի վարում, Բղդէի վանքում և Քարափի գլոխը: Այս բոլոր տեղերում էլ մի-քանի դամբաններ պեղել տուի, որոնք են.

I. Խազախաչում. Սազախաչը գտնւում է գիւղի արեւելեան կողմը, մի կիլոմետր հեռու ձգուող բլրակի լանջին: Այս անունը սա ստացել է այն քառաժայռից, որի մէջ կայ մի կլոր անցք: Հաղող երեխաներին աւանդաբար բերում այս անցքով երեք անգամ անց են կացնում, որպէսզի հաղից բժշկուին: Եթէ երեխան չի կարողանում անցնել, նրա շորերն են անցկացնում: Քարի վերայ ոչ մի խաչ չէ քանդակուած և եթէ հազի խաչ է կոչւում, այստեղ խաչ բառը սրբի, ուխտատեղու նշանակութիւն ունի:

Արդ այս Սազախաչում պեղեցի 13 դամբան.

81. Առջին դամբանի տրամագիծն էր 5 մետր, բարձրութիւնը 1 մետր: Շուրջնակի պատած էր մեծ մեծ քարերով. դերեզմանը ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած երեք քարերով. քառանկիւնի էր, անտաշ քարով պատած, երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը $1\frac{1}{2}$ մետր. $1\frac{1}{2}$ մետր խորութեամբ փորելով՝ գտանք մի երկարագլուխ կնոջ կմախք՝ պպըզա՝ դրութեամբ, ձեռին մի ապարանջան և մի մատանի, ուրիշ ոչինչ: Պէտքէ նկատել, որ ընդհանրապէս կանանց դամբանները շատ աղքատ են լինում:

82. Երկրորդ դամբանի տրամագիծն էր 6 մետր, բարձրութիւնը 1 մետր: Գերեզմանը ուղղուած էր հիւսիսից հարաւ, երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը 1,25 մետր: Քառանկիւնի էր, անտաշ քարով պատած և երեք մեծ սալերով ծածկուած: Մէկ ու կէս մետր խորութեան պեղելուց յետոյ բացուեց երեք երկարագլուխ կմախք. մինը տղամարդու, որի մօտից գտնուեց մի բլրոնդէ դաշոյն, մինը կնոջ՝ որը զարդարուած էր մի բրոնզէ մօնիակով և մի մատանիով և բազմաթիւ ուլունքներով, և երրորդ՝ երեխայի, որը ոչ մի զարդարանք չուներ: Սրանց գլխերի մօտ դրուած էին երեք պուլիկներ, որ արդէն կոտորուել էին:

83. Երրորդ դամբանի տրամագիծն էր 9,50 մետր, բարձրութիւնը մի մետր: Գերեզմանը ուղղուած էր հիւսիսից հարաւ, ծածկուած վեց սալերով, 2,50 մետր երկարութեան, 2 մետր լայնութեան, առանց պատերի: Մէկ մետր խորութեան փորելուց

յետոյ բացուեց երկու երկարազուլիս կանանց կմախքներ, պազած ձեռով, որոնց մինի մօտից դուրս եկաւ մի բրոնզէ ֆիբուլ: Սրանցից մինի դանդը վերցրիւ Նկատելով որ լիցքը չի վերջանում, շարունակեցինք պեղումը և $1\frac{1}{2}$ մետրաչափ ևս պեղելուց յետոյ բացուեց մի ուրիշ գերեզման, որ նոյնպէս հիւսիսից հարաւ էր ուղղուած և ունէր անտաշ քարից չորս պատ: Երկարութիւնը 2 մետր էր, լայնութիւնը $1\frac{1}{2}$: Այստեղ, հարաւային կողմում, կար մի երկարազուլիս տղամարդու կմախք, պազած ձեռով, որի դանդը վերցրիւ: Սրա մօտ գտնուեց մի բրոնզէ քամանդ, մի շատ գեղեցիկ, բրոնզէ ապաւանջան, և մի բրոնզէ դաշոյն: Կողքերէն դուրս եկան երեք պուլիկներ:

Եւ որովհետեւ գետինը դարձեալ փափուկ էր՝ շարունակեցինք պեղումը և $1\frac{1}{2}$ մետրաչափ պեղելուց յետոյ հանդիպեցանք մի երրորդ գերեզմանի, որ առանց պատերի էր: Այստեղ անկանոն կերպով միմեանց վրայ ձգուած էին 12 երկարազուլիս կմախքներ, որոնցից վերցրիւ 3 դանդ: Սրանց մօտից ոչ պուլիկ և ոչ էլ մի որեւէ իր գտնուեց:

84. Չորրորդ դամբանի տրամագիծն էր 9 մետր. բարձրութիւնը $1\frac{1}{3}$ մետր: Գերեզմանի երկարութիւնն էր 2 մետր. լայնութիւնը $1\frac{1}{3}$ մետր, նոյնքան էլ խորութիւնը՝ լցուած աւազախառն հողով: Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած 3 սալերով: Քառանկիւնի, անտաշ քարերով պատած գերեզմանի հարաւային կողմում պազած գրութեամբ կային մի տղամարդու և երկու կը նոջ երկարազուլիս կմախքներ, առանց մի որեւէ իրի կամ պուլիկի:

85. Հինգերորդ դամբանի տրամագիծն էր 6 մետր, բարձրութիւնը 70 սանտիմետր: Գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, քառանկիւնի էր և անտաշ քարով պատած և սալերով ծածկուած: Երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը $1\frac{1}{2}$ մետր, խորութիւնը փոքրելուց յետո՝ $1\frac{1}{3}$ մետր: Հիւսիսից հարաւ պառկած էր մի երկարազուլիս կնոջ կմախք, որի մօտից գտնուեց միայն մի քանի ուլունք:

86. Միանգամայն սրա նման էր վեցերորդ դամբանը:

87. Եոթերորդ դամբանի տրամագիծն էր 6,50 մետր, բարձրութիւնը 1 մետր: Գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, ծածկուած 3 սալերով. քառանկիւնի և անտաշ քարերով պատած: Երկարութիւնն էր 3 մետր, լայնութիւնը 1 մետր: Երկու մետր խորութեան պեղելով բացինք մի երկարազուլիս կնոջ կմախք, գերեզմանի մէջտեղում պազած, շուրջը 7 պուլիկ, միջին կարմիր ուլունքներ:

88. Սրան միանգամայն նման էր ութերորդ դամբանը, միայն

աւելի փոքր էր. ու չորս ամաններ ունէր պպղած և ուլունքնե-
րով զարդարուած երկարագլուխ կնոջ շուրջը:

89. Նոյնն էր նաև իններորդ դամբանը, միայն այստեղ՝
պպղած կնոջ կմախքը ամանների փոխարէն ունէր մի բրոնզէ
զօտի և մի նոյնպիսի մատանի: Սրա գանգը վեցերի:

90—92. Իսկ տասերորդ, տասնեւէկ և տասներկուերորդ
դամբանները բացի պպղած երկարագլուխ կանացի մի մի կմախքից,
ուրիշ ոչինչ չէին պարունակում:

93. Տասերեքերորդ դամբանը, նոյն մեծութեան և նոյն ձևի
էր, հիւսիսից հարաւ ուղղուած՝ և ներփակում էր մի տղամարդու
կմախք, որ պպղած ուղղութիւն, սնարի մօտ մի պուլիկ, և կող-
քին 12 հատ վանակատի նետեր ունէր:

II. Կալերի վերեւ.—Իմ այս գիւղում կատարած պեղում-
ները II խումբը գտնուում է «Կալերի վերև» կոչուած տեղում, որ
ընկած է Պաղատաշից հարաւ, մօտ մի կիլոմետր հեռու, նոյն
բլրակների շարքի արևմտահայեաց լանջին, գիւղից մօտ կէս կի-
լոմետր հեռու: Այստեղ ես պեղեցի 5 դամբան: Սրանցից առա-
ջին, երրորդ և չորրորդը մի տեսակ էին:

93—95. Այս երեքից իւրաքանչիւրի տրամագիծն էր 3—4
մետր, բարձրութիւնը մինչև կէս մետր: Շուրջանակի պատած
էին քարերով: Գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, քառան-
կիւնի էր, անտաշ քարերով պատած և 2—3 սալերով ծածկուած.
երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը 1½ մետր: 1—2 մետր
խորութեան փորելուց յետոյ բացւում էր մի երկարագլուխ կնոջ
կմախք, հիւսիսից հարաւ ուղղուած: Առաջին դամբանի կմախքի
մօտից դուրս եկաւ միայն մի բրոնզէ ապարանջան, երկրորդից
բրոնզէ մի նոյնպիսի ապարանջան և մի գինտ: Երրորդից՝ ու-
լունքներ և սնարի մօտ՝ մի պուլիկ:

96. Երկրորդ դամբանի տրամագիծն էր 5 մետր, բարձրու-
թիւնը ½ մետր. շուրջանակի նոյնպէս պատած էր մեծ մեծ քա-
րերով, գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, քառանկիւնի
էր, անտաշ քարով պատած և 2 սալքարով ծածկուած: Երկարու-
թիւնն էր 2 մետր, լայնութիւնը 1½ մետր: Ամբողջովին լցուած
էր աւազանառն հողով: Երկու մետրաչափ պեղելով գտանք, որ
հարաւային կողմում պպղած դրութեամբ կար մի երկարագլուխ
կնոջ կմախք, որի վրայից դուրս եկաւ մի բրոնզէ ապարանջան,
մի բրոնզէ զօտի, 2 բրոնզէ մատանի և բաւականաչափ ուլունք-
ներ: Վերջինք սրա գանգը: Ապա հիւսիսային կողմում գտանք հինգ:
Երկարագլուխ կանացի կմախքներ դարձեալ պպղած դրութեամբ և
երեսները դէպի հարաւ դարձրած, որոնց մօտից ոչինչ չգտնուեց:

97. Հինգերորդ դամբանի տրամագիծն էր 5 մետր, բարձրութիւնը 1 մետր: Շուրջանակի պատած էր քարերով: Գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, քառանկիւնի էր, անտաշ քարով պատած և միայն մի մեծ սալով ծածկուած: Երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը 1 մետր: Մի մետրաչափ փորելով տեսանք գերեզմանի մէջտեղում մի տղամարդու երկարագլուխ կմախք, պղպած դրութեամբ, որի գլխին կար բրոնզէ մի վարսակալ, ձեռին մի բրոնզէ ապարանջան, կողքին մի բրոնզէ դաշոյն և նոյնպիսի մի նիզակ, շուրջը՝ ութ պուլիկ շարուած: Սրա տակ, հաղիւ 0,30 մետրաչափ խորութեան փորելուց յետոյ բացուեց վեց երկարագլուխ տղամարդկանց կմախքներ պղպած դրութեամբ, որոնց մօտ ոչ մի իր չկար: Վերցրի թէ առաջին և թէ այս վերջիններից երեքի դանդերը:

III. Տիկնածոր. — Եկայերի վերեւ կոչուած տեղից դէպի հարաւ, նոյնպէս կէս կիլոմետր հեռու, միևնոյն բլուրների շղթայի արևմտահայեաց լանջին ևս կան բաւականաչափ դամբաններ: Այս տեղը տեղացիներից կոչուում է Տիկնածոր, այսինքն տիկնիկի ձոր, այստեղ կայ մի մեծ ժայռ քար, որ՝ իբր սրբութիւն պաշտուում է. վերջին ժամանակներս նրա վրայ մի քանի խաչեր են կերտել:

Այստեղի դամբաններից պեղեցի 7 հատ:

98. Առաջին դամբանի տրամագիծն էր 5 մետր, բարձրութիւնը $\frac{1}{2}$ մետր: Գերեզմանի երկարութիւնն էր $1\frac{1}{2}$ մետր, լայնութիւնը 0,80 մետր, ուղղուած էր հիւսիսից հարաւ, չորս կողմից անտաշ քարով պատած և ծածկուած մի մեծ սալով, յատակում ևս մի մեծ սալ կար: 70 սանտիմետր խորութեան փորելով բացինք վեց կմախք, բոլորն էլ պղպած ձեռով: Սրանցից մի տղամարդու և մի կնոջ կմախք տեղաւորուած էին գերեզմանի հարաւային կողմը, երեսները միմեանց դարձած, դրանց հանգէպ, գերեզմանի մէջտեղը կար մի ուրիշ տղամարդու կմախք, մինն էլ արեւելեան կողմը, ինչպէս և երկուսը՝ արևմտեան: Հարաւային կողմի տղամարդի գլխին կար մի բրոնզէ վարսակալ, իսկ կնոջ ձեռին երկու բրոնզէ ապարանջան: Կինը տղամարդու ձախ կողմն էր: Արևմտեան կողմի երկու կմախքներից մինի գլխին ևս դաճուեց մի վարսակալ, որ վերցնելիս փշրուեց, և սրանց առաջում երկու պուլիկ, մինը մեծ, միւսը փոքր: Սրանց դանդերից ևս վերցրի չորսը:

99. Երկրորդ դամբանի տրամագիծն էր 8,50 մետր, բարձրութիւնը 1 մետր: Շուրջանակի պատած էր մեծ մեծ քարերով: Գերեզմանի երկարութիւնն էր $2\frac{1}{2}$ մետր, լայնութիւնը 2 մետր,

խորուժիւնը՝ փորելուց յետ՝ 2 1/2 մետր։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած չորս սալերով։ Գերեզմանը քառանկիւնի էր և անտաշ քարով պատած։ Ամբողջովին լցուած էր աւազախառն հողով։ Գերեզմանի մէջտեղում կար մի տղամարդու, մի կնոջ և մի երիտասարդի երկարագլուխ կմախք, պսպած և երեսները դէպի հարաւ դարձրած։ Սրանցից երկուսի գանգերը վերցրի։ Արեւմտահիւսիսային անկիւնում կար մի պուլիկ, սրա մօտ մի կմախք, որ կարծես վերեւից գահաժիծել էր այստեղ, որովհետեւ գլուխը ներքեւում էր գտնուում, իսկ ոտները վերեւում ցցուած էին։ Գլխի տակ կար մի ջարդուած պուլիկ, որ երևի ընկնելիս էր ջարդել։ Սրա կողքին կար մի ուրիշ պուլիկ. մէջը մի կրտսրուած մարդու գլուխ դրուած. միքիչ հեռու, նոյն արեւմտեան պատին կից կային երկու երկարագլուխ կմախքներ պսպած ձևով, մինի հրեւը դէպի արեւելք, միւսինը դէպի արեւմուտք դարձրած։ Հարաւային պատին կից դարսուած էին 11 պուլիկ, սրանցից միքանիսը միմեանց վրայ էին դրուած։ Արեւելեան պատի մօտ եւ կային 3 պուլիկ։

100. Չորրորդ դամբանը 6 մետր տրամագիծ ունէր և գետնի մակերևոյթից մի մետր բարձր էր. շուրջանակի մեծ մեծ քարերով պատած։ Գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, 2 մեծ սալերով ծածկուած, քառանկիւնի և անտաշ քարերով պատած։ Երկարութիւնն էր 3 մետր, լայնութիւնը՝ 2 մետր և խորութիւնը՝ պեղելուց յետոյ՝ նոյնպէս 2 մետր։ Գերեզմանի հարաւային կողմում կար մի երկարագլուխ կմախք, պսպած ձևով, և սրա հանդէպ՝ հիւսիսային կողմում նոյնպէս երկու տղամարդու կմախք, դարձեալ պսպած։ Հարաւային կողմի կմախքի դաստակից դտնուեց մի՝ և սրունքներից՝ երկու բրոնզէ ապարանջան, կողքին մի երկաթէ դաշոյն, որ փշրուեց և մի նոյնպիսի նիզակ։ Հիւսիսային կողմի կմախքների վրայ ոչ մի իր չկար։ Պատերին կից շարուած էին 12 հատ մեծ և փոքր պուլիկներ։

101—104. Երրորդ, հինգերորդ, վեցերորդ և եօթերորդ դամբանները խեղճ կանանց էին. տրամագիծը 3—4 մետր, բարձրութիւնը մինչև կէս մետր։ Գերեզմանը հիւսիսից հարաւ ուղղուած, քառանկիւնի, անտաշ քարերով պատած և 1—2 քարով ծածկուած. երկարութիւնը 1 1/2—2 մետր, լայնութիւնը 0,60—1 մետր և խորութիւնը՝ մինչև 1 մետր։ Իւրաքանչիւրի մէջ պառկած էր մի երկարագլուխ կանացի կմախք, հիւսիսից հարաւ ուղղուած։ Միքանիսի միջից ոչ մի իր դուրս չեկաւ, մեքանիսի միջից էլ մի կամ երկու բրոնզէ ապարանջան և մատանի։

IV. Նաջարի-դար.—Նուշալիսում պեղած դամբաններու շոր-

բորդ խուժրը դանւում է գիւղից մօտ երեք կիլոմետր հեռու, դէպի արեւելահարաւ, Նաջարի (հիւսնի) դար կոչուած ցածրադիր բլուրների լանջերին: Մրանցից մի քանիսը միմեանց մօտ են կուտակուած, միւսները մէկ-մէկ ցրուած: Ընդհանրապէս այս դամբաններն որոշուած են սոյն գիւղի միւս դամբաններից թէ իրենց շուրջը շարուած և թէ գերեզմանի վրայ ձգուած քարերի մեծութեամբ: Միևնոյն ժամանակ կմախքները սաստիկ փթած են, այնպէս որ հնարատու չեղաւ դոնէ մի դանդ վերցնել:

105—109 Այստեղ ևս պեղեցի 10 դամբան, որոնցից առանձին ուշադրութեան արժանի են հետեւեալ հինգը:

110. Առաջին դամբանի տրամագիծն էր 6 մետր, բարձրութիւնը մի մետր: Պատած էր աճապին քարերով: Գերեզմանի երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը 1,25 մետր, խորութիւնը՝ պեղելուց յետոյ 1 1/2 մետր. ուղղուած էր արեւելահիւսիսից՝ արեւմտահարաւ: Ծածկուած էր երկու սալքարերով: Գերեզմանի հարաւային կողմում պղզած դրութեամբ կային մի տղամարդու, մի կնոջ և մի երեխայի երկարագլուխ կմախք, երեսները դէպի հարաւ դարձրած: Կնոջ և երեխայի ձեռքերից դուրս եկան մի մի բրոնզէ ապարանջան: Հիւսիսային և արեւմտեան պատերին կից շարուած էին չորս պղլիկներ:

111. Երկրորդ դամբանի տրամագիծն էր 7 մետր, բարձրութիւնը 1 1/2 մետր. գերեզմանի երկարութիւնը 2 1/2 մետր, լայնութիւնը 1 1/2 մետր և խորութիւնը՝ փորելուց յետոյ նոյնպէս 1 1/2 մետր. ուղղուած էր արեւմտահիւսիսից արեւելահարաւ: Ծածկուած 2 սալերով, բառանկիւնի և անտաշ քարերով պատած: Արեւելեան կողմում կար մի երկարագլուխ, պղզած կնոջ կմախք, դադաթին մի բրոնզէ վարսակալ, ականջին նոյնպիսի գինտ, աջ ձեռին չորս բրոնզէ ապարանջան, մատին 3 մատանի: Հարաւային կողմում էլ կային երկու պղզած, կանացի կմախքներ, որոնց վրայից ոչինչ չգտնուեց:

112. Երրորդ դամբանի տրամագիծն էր 6 մետր, բարձրութիւնը 1 մետր, գերեզմանի երկարութիւնը 1 1/2 մետր, լայնութիւնը 1 մետր. խորութիւնը՝ փորելուց յետոյ 1 մետր: Ուղղուած էր արեւմտահիւսիսից արեւելահարաւ, ծածկուած 2 սալով, բառանկիւնի, և անտաշ քարով պատած: Մրա հարաւային կողմում պղզած դրութեամբ կային երկու երկարագլուխ կմախքներ, մինը տղամարդու և միւսը կնոջ: Վերջինիս վրայից դուրս եկաւ մի բրոնզէ ապարանջան:

113. Չորրորդ դամբանի մէջ ոսկորներն անկարգ կերպով թափուած էին միմեանց վրայ, երեւի մի ժամանակ բացուած է եղել:

114. Հինգերորդը և սրա հետ նաև մնացած վեցը նոյն ձևի, միայն աւելի փոքր էին և ներփակում էին մի մի կանացի երկարագլուխ կմախքներ, պղծած ձևով: Այս հինգերորդի միջից դուրս եկաւ բրոնզէ մի տափարակ մանակ և ձեռի մի ապարանջան: Միւսները միջից կամ ոչ մի իր և կամ մի երկու ապարանջան և մի քանի մատանի:

Վ. Բղդէի վանքի¹⁾ շուրջը գտնոււմ է իմ պեղումները հինգերորդ խումբը: Այս տեղը գտնոււմ է Խաղախաչից դէպի արեւելք, հարթութեան վրայ: Դամբանները բազմաթիւ չեն և ինչպէս երևաց, ոչ էլ այնքան նշանաւոր: Այստեղ ևս պեղեցի վեց դամբան: Գրեթէ բոլոր դամբաններն էլ կլոր էին, 3—4 մետր տրամագծով, բոլորն էլ գետնից հազիւ կէս մետր բարձր, հարթ գագաթով: Գերեզմանները ուղղուած էին հիւսիսից հարաւ, ծածկուած 1—3 քարերով, քառանկիւնի և անտաշ քարերով պատած:

115. Առաջին դամբանը ամենահետաքրքրականն էր: Այստեղ կային մի տղամարդու և մի կնոջ երկարագլուխ կմախքներ, պղծած ձևով: Կնոջ ձեռներից դուրս եկան երկու բրոնզէ ապարանջան, տղամարդու մօտից մի վանակատի դանակ, որ շատ գործածուելուց նկատելի կերպով մաշուել էր: Շուրջը դրուած էին երկու քասա և մի շատ փոքրիկ պուլիկ, ձեռքով շինուած:

116. Երկրորդ դամբանի մէջ կար մի պղծած կմախք, մօտը միայն մի պուլիկ:

117. Երրորդի մէջ երկու պղծած կմախքներ, մի տղամարդու և մի կնոջ, առաջինի գլխից դուրս եկաւ մի բրոնզէ վարսակալ, երկրորդի ականջից մի մեծ, բրոնզէ զինտ և մի տափակ, գեղեցիկ ապարանջան:

118—120. Միւս երեքի մէջ կային միմիայն մի մի կմախք, պղծած ձևով, առանց մի որեւէ իրի:

ՎԻ. Քարափի զլոխ.—Այս գիւղում պեղած դամբաններին վեցերորդ խումբը գտնոււմ էր «Քարափի զլոխ» կոչուած տեղում, գիւղից մի կիլոմետր հեռու դէպի հիւսիս:

111—124. Այստեղ պեղեցի միայն չորս դամբան, որ գտնոււմ էին միմեանց մօտ, մի հարթութեան վրայ: Բոլորն էլ շուր-

¹⁾ Բղդէ, Բաղդասար, անունով մինը այստեղի դամբանների մինի վրայից մի մեծ օալ է տանում իւր գոմը սալայատակելու: Մտաւանջուելով թէ մի գուցէ սա սրբի վրայից է վերցրել՝ նա հիւանդանում է, մի առ ժամանակից յետոյ որդին վախճանոււմ է: Ենթադրելով թէ այս բոլորը այդ սալի սրբիցն է, վերադարձնում է սալը իւր տեղը և նրա վրայ մի փոքրիկ մատուռ կառուցանում, որը և նրա անուամբ այժմ Բղդէի վանք է կոչոււմ:

ջանակի քարեր ունէին, և գետնի երեսին միանգամայն հաւասար էին: Բոլորն էլ ծածկուած էին մի-մի մեծ սալով: Գերեզմանները հիւսիսից հարաւ էին ուղղուած, քառանկիւնի, սակայն առանց պատերի: Առաջին երկուսի մէջից սաստիկ փթած ոսկորները կտորներ դուրս եկան, երրորդից՝ հարաւից հիւսիս պառկած մի կմախքի հետ մի պուլիկ, իսկ չորրորդից՝ որ միւսներից մեծ էր, մօտ 4 մետր տրամագծով և գերեզմանը ունէր 2 մետր երկարութիւն, $1\frac{1}{2}$ մետր լայնութիւն և նոյնքան խորութիւն՝ դուրս եկաւ մի տղամարդու կմախք՝ հարաւից հիւսիս ուղղուած և աջ կողքի վրայ պառկած: Մնարի մօտ կար մի թաս, արծաթապատ, մէջը երկու արծաթէ դրամ և երկու մեծ ուլունքներ: Դուրս եկան նաև սաստիկ փթած երկաթի կտորներ:

125. Շրջելով գիւղը՝ մի գիւղացու տան մօտ նկատեցի մի տապանաքար, 3 մետր երկարութեան և $1,25$ մետր լայնութեան: Ընթադրելով որ սա կռապաշտական դամբան կըլինի, քանի որ ձգուած է հիւսիսից հարաւ՝ եւ վերջնել տուի: Եւ յիշաւի, բացուեց մի կմախք, ամփոփուած քառանկիւնի վեց սալ քարերով պատած գերեզմանի մէջ: Կմախքը տղամարդու էր, երկարագլուէս, հիւսիսից հարաւ ուղղուած և մէջքի վրայ պառկած: Նրա երեսի վրայից դռնուեց երկու գեղեցիկ արտասուաց սրուակներ:

Նոր-Բայազէս.—Յուլիսի վերջին վերադառնալով Նոր-Բայազէս քաղաքը, եւ մի քանի պեղումներ կատարեցի սրա շրջակայքում:

Նախ անցայ գէպի հիւսիս, մօտ 5 կիլոմետր հեռու քաղաքից և 3 կիլոմետր լճից: Այստեղ, մի քարքարոտ բլրի լանջին, որ յայտնի է Պոլի (կարկառի) բերան, գտնուում են բաւականաչափ դամբաններ, մի քանիսը միմեանց մօտ, միւսները միմեանցից հեռու: Ընդհանրապէս բոլորն էլ շուրջանակի քարերով պատած են, գետնից $1-1\frac{1}{2}$ մետր բարձրութեան, հարթ զազաթներով:

126—130. Այստեղ եւ պեղեցի հինգ դամբան, որոնց գերեզմաններից մինը կըոր էր, միւսները հիւսիսից հարաւ ուղղուած, երկուսը ունէին անտաշ քարից պատեր, միւսները ոչ: Բոլորից էլ դուրս էին գալիս վանակատի կտորներ և մարդու ու ձիու առամներ, ուրիշ ոչինչ: Պարզ էր, որ այս դամբանները չափազանց հին լինելով՝ կմախքներն արդէն բոլորովին հող էին դարձել:

131—135. Քաղաքի հարաւային կողմում, մօտ մի վերստ հեռու Դարի գլոխ կոչուած տեղում եւ պեղեցի 5 դամբան: Սրանք եւ շուրջանակի պատած էին քարերով և 3—4 մետր տրամագիծ

ունէին: Գերեզմաններն ուղղուած էին դարձեալ հիւսիսից հարաւ, ծածկուած 2—3 քարով, քառանկիւնի էին և անտաշ քարերով պատած: Այստեղի դամբաններից միայն մինի միջից՝ մի պղպած կանացի կմախքի մօտից՝ դուրս եկաւ մի բրոնզէ մախաղ, միւսների միջից բացի մի քանի կոտորատուած ամաններից՝ ուրիշ ոչինչ: Իւրաքանչիւր գերեզմանում լինում էր մի կամ երկու պղպած կմախք, բոլորն էլ երկարագլուխ:

Քաղաքի արևելեան կողմում, սուր Թովնանքես կոչուած ուխտատեղուց փոքր ինչ հեռու պեղեցի 10 դամբան:

Որովհետեւ ս. Յովհաննէս ուխտատեղին կուսպաշտական ժամանակներից մնացած մի սրբավայր է, հետեւապէս և՛ կարող է որեւէ առնչութիւն ունենալ մեր պեղումների հետ, ուստի և ես կարեւոր եմ համարում մի երկու խօսք ասել սրա մասին.

Ահագին մեծութեան քարեր հանդիպակաց ժայռից պոկուել են և գլորուելով իրար վրայ ընկել ու կազմել մի քարայր՝ երեք բաժանմունքից բաղկացած: Վերջին բաժանմունքը համեմատաբար շատ փոքր է և բոլորովին մութ:

Քրիստոնէական աւանդութիւնը այս այրի մօտին ասում է, թէ Երանոսում թաղուած Ս. Յովհաննէսի ճգնաբանն է եղել, որ յամենայն դէպս XVI դարուց առաջ է եղել, որովհետեւ սրա մօտի մի մեծ քարի վրայի արձանագրութիւնը ասում է, թէ 1549 թուին Թովմա անունով մէկը եկել է Քի Գաւառէն ի ծառայութիւն սուրբ Յովհաննիսին:

Կուսպաշտական սովորութիւններից մնացել են հետեւեալ երկուսը.—Ուխտաւորները մեխեր են խփում այս այրի քարերին, եթէ մեխը մտնում է քարի մէջ, գուշակում են, որ իրենց ուխտը կատարուելու է, իսկ եթէ ձոււում է և չի մտնում, այս արդէն նշան է՝ որ ուխտը չպէտք է կատարուի: Այրի պատերը ծածկուած են բաղմամբիւ մեխերով, շատ մեխեր էլ ձոււած ընկած են այս և այն անկիւնում:

Միւս սովորութիւնը վերաբերում է սրա մօտ գտնուած հանքային աղբիւրին, որի առաջ հիւանդ ուխտաւորները մօմ են վառում, ջրով լուացւում, որ բժշկուեն, ինչպէս նաև այս ջրից տանում են խնոցու մէջ ածուծ, որպէս զի աւելի շատ կարագ ստանան:

136—138. Այստեղ պեղած դամբաններից երեքը միատեսակ էին.—փոքր, 1½—2 մետր տրամագծով, շուրջանակի քարերով պատած և գետնից շատ քիչ բարձր: Երեքի վրայ ևս նկատելի էր մի-մի մեծ սալ քար, որոնց վերջնելուց յետ մօտ 1 մետր խորութեամբ փորեցինք՝ և գտանք մի-մի փոքրիկ սալ՝ դրուած մի

մի կարասի բերանի, իսկ կարասներն մէջ մի-մի պղպած, երկա-
րազլուխ կ՝ախր, սաստիկ փթած:

Ո՛հ մի իր և ոչ իսկ պուլիկ չկար սրանց մօտ: Կարասներն
էլ ճեղքոտուած էին, այնպէս որ մեր ջանքը ամբողջովին հանելու
ի դերն ելան:

139—145. Միւս եօթը դամբանները քաղաքի հարաւային
կողմում բացուած դամբաններին միանգամայն նման էին, ուս-
տի և զանց եմ առնում կրկին նկարագրելու: Այս դամբաններից
դուրս եկան:

Երկու պուլիկ, մի բաղանձման բրոնզէ պանտըլով, մի կրկնակ
բրոնզէ ապարանջան և այլ բրոնզէ ապարանջաններ:

146. Մի գերեզման էլ հիւսիսից հարաւ ռզղուած և վեց
սալբարներից բաղկացած անցնալ տարի բացուել էր քաղաքում,
Հայոց նորակառոյց եկեղեցու մօտ, որի մէջ կղել էր մի կմախք
հիւսիսից հարաւ, մէջքի վրայ պառկած, մօտը մի պուլիկ, որ փըշ-
րուել էր և մի արտասուաց գեղեցիկ սրուակ, որ պ. Գ. Արծրու-
նին տուեց ինձ:

147—151. Դաղաքից գէպի արեմուտք, Փաշաքեհանտ գիւ-
ղից գէպի արեմտահիւսիս ևս նկատեցի երեք շարք դամբանների,
որոնք ձգուած են հիւսիսից հարաւ, միմեանցից 20—50 մետր հե-
ռու: Սրանցից շատերը գետնից 2—3 մետր բարձր են, հարթ
զազաթներով, շատերը կլոր, իսկ մի քանիսը ձուաձիւր: Սրանցից
ևս պեղեցի միայն չորսը, որոնցից առանձին ուշադրութեան ար-
ժանի է միայն մինը, մանաւանդ որ միւսների միջից դուրս ե-
կած իրերը և զանգերը միանգամայն նման էին այս դամբանի
միջից դուրս եկածներին: Այս դամբանի տրամագիծն էր 21 մետր,
բարձրութիւնը՝ 2 մետր, շուրջանակի պատած էր քարով, և հարթ
զազաթ ունէր: Գերեզմանը ծածկուած էր դարձեալ երեք մեծ սալ-
քարերով, ուղղուած էր հիւսիսից հարաւ, և 5 մետր երկարու-
թիւն, 4 մետր լայնութիւն և 5 մետր բարձրութիւն ունէր: Մէջ
տեղում, հիւսիսից հարաւ պառկած էր մի տղամարդու, կողքին
երկու կանանց և սրանց մօտ չորս երեխաների երկարազլուխ
կմախքներ, որոնց վրայից պանուկը բրոնզէ մի գեղեցիկ դաշոյն,
մի նիզակ, 3 մեծ և մի փոքր բրոնզէ ապարանջան և մի բաղանձ-
ման պանդրով: Սրանցից փոքր ինչ հեռու, հարաւային անկիւ-
նում բացուեց 12 պղպղպած, նոյնպէս երկարազլուխ կմախքներ,
որոնց մօտ ոչ մի բրոնզէ իր չկար, այլ միայն մի ամբողջ
և մի քանի կոտրատուած պուլիկներ: Գերեզմանի հիւսիսային
կողմում ևս դրուած էր մի մեծ կաւէ կուժ և չորս պուլիկներ:

Նկատելով, որ այլևս նոր տիպի դամբաններ և նոր տեսա-

կի իրերը չեն պատահում, ես որոշեցի շատանալ կատարած 151 դամբանների պեղումով և վերադառնալ: Մեանի վանքում ես տեսայ արժանապատիւ Վահան վարդապետ Գէորգեանին, որը նոյնպէս վկայեց, որ գիւղացիները վարելահողի մեծ պահասութիւն գգալով, հարթում են դամբանները, որպէսզի կարողանան ցանել նրանց բռնած տարածութեան վրայ: Այսպիսով շատ դամբաններ կամ բացւում են և իրենք ու կմախքները կտրտաւում և կորչում, կամ բոլորովին հարթուելով անճանաչելի դառնում, անհետանում: Բարեբաղդաբար արժանապատիւ հայր սուրբը զանազան ժամանակներում պատահել է այդպէս բացուած հինգ դամբանների և իրերը խնամքով հաւաքել իւր մօտ: Զիջելով իմ խնդրին՝ նա միացրեց իւր այդ փոքրիկ ժողովածուն իմ ժողովածուի հետ, որովհետեւ միեւնոյն գաւառին էր վերաբերում, նուիրելով Հնագիտական ընկերութեան:

Մանրամասն հարցութիւնք՝ անելով, ես կարողացայ նկարագրել այդ հինգ դամբանները այսպէս.

152. Առաջին դամբանը բացուել է Օրդակլու գիւղում, լճի անմիջապէս ափին, խճուղու մօտ: Դամբանը գետնի մակերևոյթից բարձր չէ եղել, շուրջանակի ունեցել է՝ մանր քարեր և մէջտեղում՝ երեք մեծ սալ: Տրամագիծը եղել է 3 մետր: Գերեզմանը, որ բացուել է երեք երեւցող սալերը վերցնելուց անմիջապէս յետոյ, եղել է կլոր, տաշած և անտաշ քարերով պատած, մօտ երկու մետր տրամագիծով: Գերեզմանը հողով լցուած է եղել. մօտ $1\frac{1}{2}$ մետր խորութեան փորելով գտնուել են մէջտեղում երկու և պատերին կից՝ հինգ երկարազլուէի կմախքներ: Մէջտեղի մի կմախքի վրայ (տղամարդու) գտնուել է մի բրոնզէ դաշոյն և երկու բրոնզէ ապարանջան, իսկ միւս կմախքի (կնոջ) վրայ՝ մի բրոնզէ ապարանջան, մի մատանի և բաւականաչափ ուլունքներ: Այս երկու կմախքի մօտերը դրուած են եղել մի մեծ քասա, մի փոքրիկ գաւաթ, մէջը ոչխարի ոսկորներ, և մի փոքրիկ պուլիկ:

153 Երկրորդ դամբանը բացուել է առաջինից փոքր ինչ հարաւ. սա եւս ունեցել է շուրջանակի դաբսած մանր քարեր և մէջտեղի երեք քարերը երևալիս են եղել: Տրամագիծն եղել է 3 մետր, գետնի մակերևոյթին հաւասար: Գերեզմանը ուղղուած է եղել արեւելքից արեւմուտք, 2 մետր երկարութեան, $1\frac{1}{2}$ մետր լայնութեան և 2 մետր խորութեան: Արեւմուտքից դէպի արեւելք, մէջքի վրայ պառկած են եղել չորս կմախքներ, որոնց սնարի մօտ դրուած է եղել մի կանթաւոր կաւէ աման, կողքերին մի մի պուլիկ, ոտների մօտ էլ մինը: Աջ կողմի երկու կմախքների մի-

ջև նոյնպէս դրուած է եղել մի փոքրիկ պուլիկ, որի մէջ եղել է մի բրոնզէ ապարանջան և միքիչ ուլունքներ: Այս գերեզմանում գտնուել է նաև մի արծաթէ դրամ:

154. Երրորդ դամբանը բացուել է նոյն գիւղում, այժմեանս. Գէորգ ուխտատեղու մօտ, լճափին: Շուրջանակի ունեցել է մեծ մեծ քարեր, և գետնի մակերևոյթից կէս մետր բարձր է եղել: Տրամագիծը հասել է 3 մետրի: Գերեզմանը ուղղուած է եղել հիւսիսից հարաւ, ծածկուած միայն մի մեծ սալով և պատած անտաշ քարերով: Երկարութիւնը եղել է 2 մետր, լայնութիւնը 1 մետր և խորութիւնը՝ 2 մետր: Գերեզմանի հարաւային կողմում եղել է մի կարաս, մէջը մի մարդկային կմախք, պպըզած ձևով, վերան ուլունքներ և մի բրոնզէ գինտ: Սրա հանդէպ՝ մի ուրիշ, փոքր ինչ փոքր կարաս՝ պռկած ձևով և մէջը մի երեխայի կրմախք, վերան՝ ուլունքներ: Երկու կարասների միջև դրուած է եղել մի կանթաւոր պուլիկ:

155. Զորրորդ դամբանը բացուել է նոյնպէս նոյն գիւղում, լճափին, այժմ Սատանխաշ կոչուած տեղում: Գետնի մակերևոյթից հազիւ կէս մետր բարձրութիւն է ունեցել և պատած է եղել մեծ մեծ քարերով: Տրամագիծը հասել է 3 մետրի: Գերեզմանը ուղղուած է եղել հիւսիսից հարաւ, ծածկուած մի մեծ սալով և պատած մեծ մեծ սալերով: Երկարութիւնը եղել է $1\frac{1}{2}$ մետր, լայնութիւնը՝ մի մետր և խորութիւնը՝ 2 մետր: Գերեզմանի մէջ միմեանց մօտ կանգնեցրած են եղել երկու կարաս՝ մէջը մի մի կմախք՝ պպըզած ձևով և զարդարուած միայն ուլունքներով: Իւրաքանչիւր կարասի մօտ դրուած է եղել մի պուլիկ:

156. Հինգերորդ դամբանը բացուել է Յամաքաբերդ գիւղում: Շուրջանակի պատած է եղել քարերով, 3 մետր տրամագիծ է ունեցել, և գետնի մակերևոյթից շատ քիչ բարձր: Գերեզմանը ուղղուած է եղել հիւսիսից հարաւ, ծածկուած 2 մեծ սալերով, և պատած տաշած քարով: Գերեզմանի մէջ հիւսիսից հարաւ պռկած են եղել երկու կմախքներ, որոնցից մինի վրայից գտնուել է մի բրոնզէ ապարանջան, բաւականաչափ ուլունքներ և ոսկորից շինուած զարդարանքներ: Կմախքների կողքերին դրուած են եղել երեք պուլիկ: